«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2022

ՆԱԽԱԲԱՆ

«Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ–ի (այսուհետ ԵԹԱՊՔ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը:

Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա: Զեկույցը պարունակում է ԵԹԱՊՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ…….……2
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ……4
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ…….…….…13
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ……13
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ…….…….…17
I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ……19
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ…….…23
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ…….…….29
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ……...…35
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ……40
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ……...…44
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ……...…48
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ…….…51
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ…….……...55
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ…….……58
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ……62
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ……63
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ……65
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ……...……67
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ……...……69
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ…….…70
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ……...……71

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականցրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական գնահատում իրականացնելիս խումբը հաշվի է առել, որ ԵԹԱՊՔ-ի սահմանած առաքելությանը համապատասխան՝ «Քոլեջի գործունեությունն ուղղված է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, կրթական ծրագրերի համապատասխանեցմանը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովմանը»: Փորձագիտական խումբը նշում է՝ կրթության ոլորտում ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը և դրան միտված քաղաքականությունն ընդհանուր առմամբ համապատասխանում են ուսումնական հաստատության որդեգրած առաքելությանը և համահունչ է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին: Սակայն, հաշվի առնելով, որ կրթության ոլորտում քոլեջի ծավալած գործունեությունն ու վարած քաղաքականությունը երբեմն չեն համապատասխանում քոլեջի առաքելությանը, ուստի փորձագիտական խումբը մտահոգված է քոլեջի սահմանած որոշ հիմնախնդիրների լուծման իրագործելիությամբ: Փորձագիտական խումբն իր անհանգստությունն է ընդգծում նաև առ այն, որ արտաքին և ներքին շահակիցները շոշափելի մասնակցություն չեն ունեցել ՄՈՒՀ-ի ՌԾ-ի նպատակների սահմանմանը: Ավելին՝ ՌԾ-ի նպատակների և քոլեջից արտաքին շահակիցների ակնկալիքների միջև առկա է տարակարծություն քոլեջի պատրաստած մասնագետների հարցում՝ գործատուներին անհրաժեշտ են ընդամենը կարող-վարպետներ, իսկ քոլեջը թողարկում է հագուստի մոդելավորողներ և տեխնոլոգներ: Այս հարցում գործուն քայլեր չեն իրականացվում և երկուստեք սահմանափակվում են խորհրդատվական բնույթի քննարկումներով:

ՀՀ ԵԹԱՊՔ-ն իրականացնում է 10 մասնագիտական կրթական ծրագիր, որոնցից 4-ը անմիջականորեն վերաբերում են թեթև արդյունաբերության ճյուղին՝ «Հագուստի նախագծում և մոդելավորում», «Դիզայն (ըստ ճյուղերի)», «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», «Կոշիկի արտադրության տեխնոլոգիա», ընդ որում վերջին տարիներին «Կոշիկի

[1] ՀԱՎԵԼԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ դիմորդներ չկան, և քոլեջը որևէ քայլ չի ձեռնարկում կամ մասնագիտությունը փակելու, կամ վերագործարկելու համար։ Մյուս՝ «Ապահովագրական գործ», «Հաշվապահական հաշվառում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Սպասարկման կազմակերպում», «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» (վերջին մասնագիտության գծով դիմորդներ չունեն)[2] մասնագիտական կրթական ծրագրերով քոլեջը թեթև արդյունաբերության ոլորտը սպասարկող մասնագետներ է պատրաստում։ «Ապահովագրական գործ» մասնագիտության պարագայում թերևս միայն զարգացած արդյունաբերական տնտեսությամբ երկրներում այն կարող է սպասարկել թեթև արդյունաբերությանը՝ պայմանավորված խոշոր տեքստիլի գործարաններում գույքային և ոչ գույքային ապահովագրական պայմանագրերի նեղ մասնագետներ ունենալու պահանջով։ ՀՀ-ում արդյունաբերության ներկայիս զարգացման փուլում այդ մասնագիտությունը չի կարող ըստ էության սպասարկել թեթև արդյունաբերության ճյուղը։ Հետևաբար, փորձագիտական խումբը գտնում է, որ «Ապահովագրական գործ»-ը քոլեջի առաքելության ու անվանման տեսանկյունից արդյունավետ մասնագիտություն չէ։ Այս համատեքստում փորձգիտական խումբն ընդգծում է, որ վերջին տարիներին ՄՈՒՀ-ն ապահովել է թեթև արդյունաբերությանը վերաբերող մասնագիտական կրթական ծրագրերով դիմորդների քանակի աճ, ուստի աներկբա է այն պնդումը, որ ՄՈՒՀ-ի համար առավել շահեկան են թեթև արդյունաբվերությանը վերաբերող մասնագիտությունները։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԵԹԱՊՔ-ն իր ծավալած գործունեության և ՄԿԾ-ների իրականացման համար ունի բավարար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ։ Մարդկային ռեսուրսների առումով գովելի է, որ վերջին տարիներին քոլեջը երիտասարդ կադրեր ներգրավելու և նրանց առաջխաղացմանն ուղղված հստակ գործընթացներ է իրականացնում։ Մասնավորապես՝ քոլեջի դասախոսական կազմը համալրվել է շուրջ 13 դասախոսներով և այդ միտումը շարունակական է, քոլեջում առկա են մասնագիտական առաջընթացի դեպքեր և որոշակիորեն բարձարցրել են դասախոսների աշխատավարձը։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Հագուստի մոդելավորում» ամբիոնների կողմից հրավիրված դասախոսներին փորձաշրջան տրամադրելու, դասալսումներ և քննարկումներ կազմակերպելու միջոցով նրանց աշխատանքի ընդունելու որոշում կայացնելու մոտեցումը։ Այն գեներացնելու պարագայում կմեծանա լավ մասնագետներ ներգրավելու հնարավորությունը։ Այս կապակցությամբ, թերևս քոլեջը թերանում է դասախոսների կարիքի վերհանման և նրանց հետագա մասնագիտական կատարելագործման հարցում և բավարար միջոցներ չի հատկացնում դասախոսների մասնագիտական վերապատրաստումներ կազմակերպելու

[2] Վերախմբագրվել է ՄՈՒՀ-ի դիտարկման արդյունքում։

համար։ Փորձագիտական խումբը պնդում է, որ քոլեջի դասախոսական կազմն ունի այն ներուժը, որով կարող են իրականացնել քոլեջի կրթական գործունեության բարելավումները։

Քոլեջն ունի ընդարձակ տարածքներ, կարի լաբորատորիաներ, համակարգչային լսարաններ, կաբինետներ, որոնք, ճիշտ է, բարեկարգ չեն, ապահովված չեն ժամանակակից մեքենա-սարքավորումներով, նյութերով, բայց փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի գործադրած ջանքերը ռեսուրսների բարելավման և դրանց նորացման ուղղությամբ։ Այս կոնտեքստում քոլեջի համար առաջնային նշանակություն ունի գործընկերների հետ համատեղ գույքի օգտագործման քաղաքականության մշակումն ու իրականացումը, որն ունենալու պարագայում կամրապնդվեն գործընկերային համագործակցություններն ու կբարելավվեն մասնագիտական կրթական ծրագրերը։ Ինչ վերաբերում է ֆինանսական ռեսուրսներին, ապա փորձագիտական խումբը կարևորում է, որ բացի ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորումից, քոլեջում ուսանողների վարձավճարների հաշվին ձևավորում է արտաբյուջե, որն ուղղվում է դասախոսների աշխատավարձերի բարձրացմանը, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձերի ամսական հավելումներ տրամադրելուն։ Սակայն այս կապակցությամբ փորձագիտական խումբն իր մտահոգությունն է հայտնում, որ այդ հավելումների դիվերսիֆիկացման հիմքում դրված չէ որևէ հիմնավորում, տրամաբանություն։

Փորձագիտական խումբն ընդգծում է, որ ՄՈՒՀ-ում ռազմավարական կառավարումն ու պլանավորումը արդյունավետորեն չեն իրականացվում։ Ճիշտ է 2019թ.-ից ՄՈՒՀ-ը մշակել և հաստատել է կառավարման գործընթացներն ապահովող կանոնակարգեր և ընթացակարգեր, սակայն դրանք մշակվել են ըստ անհրաժեշտության և կառավարչական որոշումների կայացման հիմքում չեն դրվել հստակ վերլուծված և ամփոփված տվյալներ։ Փորձագիտական խմբի կողմից բացասական է գնահատվում, որ երկարաժամկետ և կարճաժկետ պլանները նպատակադրումների և դրանց իրականացման տեսանկյունից համադրելի չեն, առկա չէ ՌԾ-ի կատարողական։ Դրանց մշտադիտարկման համար կազմվող հաշվետվությունները առավելապես նկարագրողական են, քանակական և որակական վերլուծություններ չեն ներառում, տնօրենն իր գործունեության հաշվետվությունը կառավարման խորհրդին բանավոր կերպով է ներկայացնում։ Հետևաբար, ինչպես ընդհանրական դրական արձանագրումներ, այնպես էլ բարելավման ենթակա խնդիրներ դուրս չեն բերվել։ Բացի այդ էլ, փորձագիտական խումբն իր անհանգստությունն է հայտնում, որ քոլեջի բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործման ուղղություններն ըստ էության չեն արտահայտում ՌԾ առաջնահերթությունները։ Ստացվում է, որ ՄՈՒՀ-ն իր երկարաժամկետ, կարճաժամկետ պլաններով և դրանց հաշվետվություններով չի կարողանում գնահատել ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետությունը՝ ամբողջությամբ վտանգելով կառավարման համակագի արդյունավետությունը։

Փոձագիտական խմբի կողմից դրական է ընկալվում ՄՈՒՀ-ի որակի ապահովման համակարգի ներդրման փորձը՝ համապատասխան ՈԱ կենտրոնով և ՈԱ

քաղաքականությամբ: Սակայն մտահոգիչ է, որ այդ քաղաքականությամբ սահմանված և որակի ապահովմանը միտված փաստացի իրականացվող գործընթացների միջև առկա է խզում, բացի դա, հստակ նպատակադրումների, տեսլականի բացակայությունը կարող են որակի ապահովման գործընթացները տանել սխալ պլանավորման ուղղությամբ: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ քոլեջը պետք է ջանքեր գործադրի, որպեսզի որակի ապահովման համակարգի անհրաժեշտությունը և հստակ սահմանված նպատակները ամբողջովին ընդունելի լինեն և՛ արտաքին, և՛ ներքին շահակիցների կողմից: Արդյունքում կմեծանա նրանց մասնակցությունը քոլեջի ՈԱ բարելավման գործընթացներին: Բացասական է գնահատվում, որ ՄՈՒՀ-ում բացակայում է տվյալների հավաքագրման, վերլուծությունների և դրանց արդյունքում վեր հանված խնդիրների ուղղությամբ համարժեք լուծումներ առաջադրելու տրամաբանական շղթան: ՈՒստի հաստատության կրթական գործընթացների շարունակական բարելավումները իրատեսական չեն:

Ընդհանուր առմամբ ուսանողները գոհ են ԵԹԱՊՔ–ի տրամադրած կրթական միջավայրից, որոշակիորեն ձևավորված են ուսանողների կարիքների բացահայտման մեխանիզմներ, սակայն դրանք բարելվման անհրաժեշտություն ունեն:

ԵԹԱՊՔ-ն իրեն չի համարում հետազոտական ուսումնական հաստատություն և սահմանված չեն հետազոտական այն ուղղությունները, որոնք կնպաստեին դասախոսների և ուսանողների ստեղծագործական, վերլուծական հմտությունների շարունակական զարգացմանը: Փորձագիտական խումբն առանձնացնում է ՄՈՒՀ-ում իրականացվող հետազոտական տարբեր պարունակող որոշ աշխատանքներ, սակայն այն քոլեջի համար դեռևս հստակ քաղաքականության չի վերածվել, որի արդյունքում կարող է վտանգվել ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի պահանջներին համապատասխան ստեղծագործական, վերլուծական հմտությունների զարգացումը: Փորձագիտական խումբը բացասական է գնահատում, որ դասախոսական կազմը հետազոտական բաղադրիչով աշխատանքներ չի իրականացնում, որի հետևանքով մասնագիտական արդի պահանջներին համապատասխան հանձնարարականների մշակումն ու տրամադրումը կարող է արդյունավետ չհամարվել: Ընդհանուր առմամբ, անհանգստացնող է այն վարքագիծը, որ քոլեջում մեծ ջանքեր չեն գործադրվում հետազոտական գործունեության զարգացման ուղղությամբ, անհրաժեշտ միջոցներ չեն տրամադրվում այդ ուղղության զարգացման համար, որն էլ իր հերթին հանգեցրել է հետազոտական բաղադրիչի անտեսմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԵԹԱՊՔ-ն ունի որոշակիորեն ձևավորված արտաքին հաշվետվողականության համակարգ, սակայն միևնույն ժամանակ արձանագրում է, որ ներքին հաշվետվողականության գործընթացները ՄՈՒՀ–ում համակարգված և լիարժեք չեն, տնօրենի, փոխտնօրենի կանոնակարգված հաշվետվությունների բացակայությունը կարող է վտանգել քոլեջի ՌԾ-ի նպատակների ամբողջական իրականացումը: Ինչ վերաբերում է առկա հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի, ամփոփ գնահատականների բացակայությանը, ապա այս դեպքում ՄՈՒՀ–ն

ուղղակիորեն հնարավորություն չունի վերհանել կրթական գործընթացում առկա մեծ խնդիրները և դրանց համարժեք լուծումներ առաջադրել:

Փորձագիտական խումբը, ընդունելով, որ ԵԹԱՊՔ-ն ունի իր գործընկերային համագործակցության շրջանակը, այնուամենայնիվ իր մտահոգությունն է հայտնում առ այն, որ քոլեջը կարծես մեծ շահագրգռվածություն չունի նոր գործատու-գործընկերներ ներգրավելու կապակցությամբ: Արդյունքում կարող է բացառվել նոր հնարավորությունների, ձեռքբերումների գեներացումը: Հարկ է նշել, որ առկա համագործակցություններն էլ որոշակի առումով մնում են ստորագրված հուշագրերի մակարդակում: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսներն ու ուսանողները անհրաժեշտություն ունեն օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Տնտեսության գերակա ճյուղ համարվող թեթև արդյունաբերությանը վերաբերող մասնագիտությունների նկատմամբ մեծ պահանջը:
2. Արտաբյուջեի առկայությունը:
3. Արդյունավետ ՄԿԾ-ների առկայությունը («Հագուստի նախագծում և մոդելավորում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»):
4. Վճարովի սովորող ուսանողների թվի ավելացումը:
5. Դասախոսական կազմի ներուժի առկայությունը:
6. Երիտասարդ կադրեր ներգրավելու և նրանց առաջընթացն ապահովող քոլեջի քաղաքականությունը:
7. Քոլեջի միտումը աշխատավարձերի բարձրացման գործում:
8. Կրթական գործունեություն իրականացնելու համար ընդարձակ տարածքների առկայությունը:
9. Ռեսուրսները բարելավելու և նորացնելու քոլեջի ձգտումը:
10. Ռեսուրսային բազայի հասանելիությունը ուսանողների և դասախոսների համար:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ռազմավարական պլանավորման մեջ արտաքին և ներքին շահակիցների սակավ ներգրավվածությունը:
2. Թեթև արդյունաբերությանը վերաբերող մասնագիտությունների սակավությունը:
3. Կառավարման համակարգի անարդյունավետությունը:
4. Գործառնական պլանավորման անկատարությունը:
5. Բոլոր գործընթացներում մշտադիտարկման մեխանիզմների բացակայությունը:
6. ՄԿԾ-ների կառավարման գործընթացում արտաքին շահակիցների մասնակցության բացակայությունը:

7. Դասախոսների մասնագիտական վերապատրաստումների սակավությունը։
8. Հետազոտական բնույթի աշխատանքներում ուսանողների և դասախոսների սակավ մասնակցությունը։
9. ՄԿԾ-ներն իրականացնելու համար ոչ արդի և սակավ նյութատեխնիկական բազան։
10. Կրթական կարիքները վերհանելու մեխանիզմների բացակայությունը։
11. Հաշվետվողականության համակարգի անկատարությունը։
12. Գործատուների հետ համատեղ գույք կիրառելու քաղաքականության բացակայությունը։
13. Համագործակցության նեղ, ֆիքսված շրջանակը։
14. ՈԱ գործընթացների պլանավորված և կանոնակարգված չլինելը։

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Վերանայել քոլեջի առաքելությունը՝ առավելապես հիմնվելով ՄՈՒՀ-ի առանձնահատկությունների, մրցակցային առավելությունների և ծավալած գործունեության վրա՝ շեշտադրելով նաև ՄՈՒՀ-ի դերը թեթև արդյունաբերության ոլորտում:
2. ՄՈՒՀ-ի արտաքին և ներքին շահակիցներին ներգրավել ՌԾ-ի մշակման և իրագործման գործընթացներում։
3. Ներդնել ՌԾ-ի կատարողական, ունենալ ՌԾ-ի կատարողականի գնահատման քանակական և որակական հստակ սահմանված ցուցիչներ։
4. Վերանայել մասնագիտական կրթական ծրագրերը՝ շեշտադրելով թեթև արդյունաբերության ոլորտը:

Կառավարումն ու վարչարարությունը

5. Վերանայել ՄՈՒՀ-ի կանոնակարգերն ու ընթացակարգերը, համապատասխանեցնել քոլեջի գործընթացներին։
6. Մշակել և իրագործել ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետ քաղաքականություն՝ բխեցնելով ՌԾ-ի առաջնահերթություններից։
7. Համադրելի դարձնել երկարաժակետ և կարճաժամկետ պլանները և դրանց հաշվետվությունները՝ իրականացնելով նաև համապատասխան վերլուծություններ։
8. Ակտիվացնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը կառավարչական որոշումների կայացմանը։
9. Կառավարչական որոշումներ կայացնելիս հիմնվել հավաստի և վերլուծված տվյալների վրա:

Մասնագիտության կրթական ծրագրերը

10. Մշակել և իրագործել ՄԿԾ-ների մշտադիտարկումների միասնական քաղաքականություն և ընթացակարգեր՝ գործընթացներին մասնակից դարձնելով նաև շրջանավարտներին և գործատու-գործընկերներին:
11. Մոդուլներում ներառել ստեղծագործական, վերլուծական բնույթի հանձնարարականներ՝ ապահովել ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի նկարագրիչները:
12. Իրականացնել ՀՀ ՄՈՒՀ-երի ՄԿԾ-ների և մոդուլային ծրագրերի համեմատություն՝ ապահովելով ՄԿԾ-ների հետագա շարունակական բարելավումը:
13. Լավարկել և տարածելի դարձնել ուսումնառության, դասավանդման և գնահատման համակարգերի առկա արդյունավետ մեթոդները:

Ուսանողները

14. Մշակել և ներդնել մեխանիզմներ մեծացնելու ՈՒԽ-ի դերը ուսանողների կարիքների վեր հանման և իրավունքների պաշտպանության գործընթացներում:
15. Մշակել և ներդնել ուսանողներին տրամադրվող կրթական ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ ապահովելով նաև վերլուծությունների իրականացումը և հետադարձ կապի ապահովումը:
16. Բարելավել շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները՝ մշտապես թարմացնելով շրջանավարտների վերաբերյալ ընթացիկ տեղեկատվությունը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

17. Մշակել ըստ մասնագիտությունների դասախոսներին ներկայացվող հստակ պահանջներ:
18. Կատարելագործել դասախոսների գնահատման և կարիքների վերհանման գործիքակազմը:
19. Ֆինանսական միջոցներ հատկացնել դասախոսների մասնագիտական վերապատրաստումների համար:
20. Կարիքի դուրսբերման հիման վրա պարբերաբար մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում և արդյունքների գնահատում:

Հետազոտությունը և զարգացում

21. Սահմանել ՄՈՒՀ-ի առանձնահատկություններից բխող հստակ հետազոտական քաղաքականություն՝ առանձնացնելով հստակ և կոնկրետ հետազոտական ուղղություն/ներ:
22. Վերանայել հանձնարարականները՝ ներառելով ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի պահանջներին համապատասխան հետազոտական բաղադրիչ:

23. Խրախուսել դասախոսներին իրենց ոլորտում ուսումնասիրություններ իրականացնելու համար, մեծացնել ուսանողների ներգրավվածությունը հետազոտական տարրեր պարունակող աշխատանքներում՝ ապահովելով նորարարությունների մուտքը ՄՈՒՀ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

24. Ֆինանսական պլանավորման մեջ առաջնահերթություն դիտարկել մասնագիտական լսարանների և լաբորատորիաների ժամանակակից մեքենա-սարքավորումներով և նյութերով (կտոր թելեր, այլ պարագաներ) համալրումը:
25. Մշակել և ներդնել գործատուների հետ համատեղ ռեսուրսների կիրառման քաղաքականություն:
26. Բարելավել ռեսուրսների արդյունավետության գնահատման մեխանիզմները:

Հասարակական պատասխանատվությունը

27. Կանոնակարգել ներքին հաշվետվողականության և փաստաթղթաշրջանառության համակարգը՝ բխեցնելով ՄՈՒՀ–ի ռազմավարական նպատակներից և ապահովելով վերլուծական մաս:
28. Բարելավել ՄՈՒՀ–ի հանրային տարածման մեխանիզմները՝ անհրաժեշտության պարագայում ներգրավելով կարողունակ մասնագետի (PR մասնագետ) և իրականացնելով ընթացիկ աշխատանքների արդյունավետության վերլուծություններ:
29. Բարելավել հետադարձ կապի ապահովման մեխանիզմները:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

30. Մշակել և իրագործել արտաքին կապերը խրախուսող քաղաքականություն և ընթացակարգեր, որոնցում կարտացոլվեն ՄՈՒՀ-ի նպատակները արտաքին կապերի հզորացման ուղղությամբ՝ հստակեցնելով արտաքին կապերի պատասխանատուին և նրա գործառույթները:
31. Ընդլայնել համագործակցությունների շրջանակը՝ ներգրավելով նաև գործատուների:
32. Մշակել և ներդնել արտաքին կապերի գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
33. Մշակել և իրականացնել ծրագրեր, որոնք միտված կլինեն ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը:

Որակի ներքին ապահովման համակարգը

34. Վերանայել որակի ապահովման քաղաքականությունը՝ հստակ սահմանելով ՄՈՒՀ-ի նպատակները ՈԱ գործընթացներում:

35. Վերանայել ՈԱ գործընթացների փաստաթղթային հենքը՝ ուսումնասիրելով և վերլուծելով ՄՈՒՀ–ի առաջնահերթությունները և առանձնահատկությունները, ինչպես նաև ՄՈՒՀ-ի գործընթացներում ներդնել ՈԱ արդյունավետության գնահատման մեխանիզմներ։
36. ՈԱ գործընթացները պլանավորել ըստ ՄՈՒՀ–ի առաջնահերթությունների՝ շեշտադրելով տվյալների հավաքագրումը և ՄՈՒՀ–ում իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատումը։
37. ՄՈՒՀ-ի բոլոր գործընթացներում, այդ թվում՝ ՈԱ գործընթացներում, ապահովել ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը։
38. Մշակել և ներդնել ՈԱ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման և կարիքների վերհանման մեխանիզմներ՝ ապահովելով ՈԱ գործընթացներում շահակիցների ներառականությունը, թափանցիկությունը և հետադարձ կապը։
39. Բարելավել հարցումների իրականացման ընթացակարգը, մշակել մեթոդաբանություն և հարցաթերթերում ընդգրկած հարցերը դարձնել առավել թիրախային և խնդիր վեր հանող։

_____

Արմենուհի Մհերյան
Փորձագիտական խմբի ղեկավար

21 հունվարի 2022թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից՝

1. **Արմենուհի Մհերյան՝** Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
2. **Մանուշ Արզումանյան՝** «Քարհանյան» առցանց դպրոցի մեթոդիստ,
3. **Նարինե Միրականյան՝** Մանկավարժական գիտությունների թեկնածու, Կրթության տեսչական մարմնի «իԳործ» ծրագրի մասնակից,
4. **Ավետիք Խոստեղյան՝** Գավառի գյուղատնտեսական քոլեջի Հաշվապահական հաշվառում մասնագիտության 3–րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային բաժնի մասնագետ **Անահիտ Տերտերյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԵԹԱՊՔ–ը 12.02.2021թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (17.03.2021թ.) ԵԹԱՊՔ–ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է ԵԹԱՊՔ–ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծություն

Քանի որ ԵԹԱՊՔ-ն առաջին անգամ էր անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացով, և գործընթացն իրականացնելը քոլեջի համար բարդ էր, այդ պատճառով ՈԱԱԿ–ը որոշակի աշխատանքներ է իրականացրել ուսումնական հաստատության հետ՝ նախապատրաստելով նրան ինքնավերլուծության ներկայացմանը և հավատարմագրման գործընթացին: Փետրվար ամսին ԵԹԱՊՔ-ը 2 շաբաթվա ընթացքում իրականացրել է SWOT վերլուծություն հավատարմագրման 10 չափանիշներին

համապատասխան: SWOT վերլուծության ներկայացումից հետո քոլեջն առաջադրել է 2 աշխատակից, որոնց հետ միասին ՈԱԱԿ աշխատակիցները 2 շաբաթ դիտարկել են քոլեջի կողմից ներկայացված SWOT վերլուծությունը, դուրս են բերել հիմնական խնդիրները: Աշխատակիցներն այդ ընթացքում ուղղորդվել են, թե SWOT վերլուծությունն ինչպես պետք է կատարել, և ինքնավերլուծության ընթացքում քոլեջը հատկապես ինչին պետք է ուշադրություն դարձնի չափանիշների շրջանակում: SWOT վերլուծության դիտարկումից հետո քոլեջի աշխատակիցները՝ որպես փորձագետներ, ՈԱԱԿ աշխատակիցների հետ միասին սույն թվականի մարտի 4-ին իրականացրել են մշտադիտարկում ԵԹԱՊՔ-ում:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ–ի պահանջներին ստուգելու նպատակով: ԵԹԱՊՔ–ի ներկայացրած ինքնավերլուծությունը չի համապատասխանել սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել տեխնիկական, ձևաչափային և բովանդակային թերություններ: Ինքնավերլուծությունը վերադարձվել է ՄՈՒՀ–ին, ՄՈՒՀ–ը սահմանված ժամկետներում շտկել է թերությունները և ինքնավերլուծությունը համապատասխանեցրել ՈԱԱԿ սահմանված ձևաչափին: Ինքնավերլուծությունը ՈԱԱԿ է ներկայացվել 20.09.2021թ.:

Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 15 աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները և ներքին շահակիցները՝ ուսանողները, չեն մասնակցել:

Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, որը երբեմն հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ հասկանալ և ճիշտ գնահատել քոլեջում տիրող իրական վիճակը:

Նախապատրաստական փուլ

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով: Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈՒ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[3]: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն[4], զուգահեռ հանդիպումներ և այլն: ՈԱԱԿ-ը քոլեջի փորձագիտական այցերի ընթացքում որպես նորույթ ավելացրել է երկու զուգահեռ հանդիպումներ, զուգահեռ հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր մասնագիտական ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին երկու մասնագիտական հանդիպումներ ունենալ քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

Նախնական այց

2021 թ. նոյեմբերի 2-ին տեղի է ունեցել հանդիպում ԵԹԱՊՔ–ի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ համակարգողը, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը և փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը պլանավորված է եղել իրականացնել 2021թ. նոյեմբերի 8–11–ն ընկած ժամանակահատվածում, սակայն պայմանավորված COVID 19 համավարակի լայն տարածմամբ ՄՈՒՀ–ը դիմել է ՈԱԱԿ 2 շաբաթով փորձագիտական այցը հետաձգելու համար: Փորձագիտական այցը տեղի է ունեցել նոյեմբերի 22–25–ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից մեկ օր առաջ (21.11.2021թ.) փորձագիտական խմբի

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

բոլոր անդամները և համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափորոշիչների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների (դասախոսական կազմ, ուսանողներ, շրջանավարտներ) մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ բաց հանդիպման: Փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում[5] և ֆոկուս խմբային հանդիպումներ: Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունք:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ դեկտեմբերի 23–ին: Նախնական զեկույցը ներկայացվել է ԵԹԱՊՔ-ին 24 դեկտեմբերի 2021թ.- ին: Զեկույցի վերաբերյալ իր դիտողությունները և մեկնաբանությունները ԵԹԱՊՔ-ը ներկայացրել է 10 հունվարի 2022թ.-ին: ՈԱԱԿ-ը կազմակերպել է ՄՈՒՀ-ի և փորձագիտական խմբի հանդիպում՝ պարզաբանելու ՄՈՒՀ-ի դիտարկումները: Հանդիպումից հետո փորձագիտական խումբը պատրաստել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 21 հունվարի 2022թ.-ին:

Անահիտ Տերտերյան
Փորձագիտական խմբի համակարգող

21 հունվարի 2022թ.

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 4: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջը ստեղծվել է 1929թ. Լենինականում (ներկայումս Գյումրի)՝տեղի տեքստիլ ֆաբրիկայի համար կադրեր պատրաստելու նպատակով: Առաջին շրջանավարտները թողարկվել են 1932թ.՝ 12 հոգի: Մինչև 1990–ական թվականները ՄՈՒՀ–ը եղել է միակ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը, որը պատրաստել է կադրեր թեթև արդյունաբերության ոլորտի սպասարկման նպատակով: Քոլեջը 91 տարիների ընթացքում կադրեր է պատրաստել 22 մասնագիտությունների գծով՝ բավարարելով Հայաստանի Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների պահանջարկը: 1951թ. տեխնիկումը տեղափոխվում է Գլինկայի 2 հասցեում գտնվող ներկայիս ուսումնական շենք: Աստիճանաբար բացվել են նոր մասնագիտություններ:

2002թ. կառավարության որոշմամբ, տեխնիկումը վերանվանվել է և դարձել Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ): Իր գոյության ընթացքում հաստատությունը տվել է մոտ 20 հազար շրջանավարտ: ՄՈՒՀ–ում այսօր կրթություն է ստանում մոտ 450 ուսանող:

Կրթություն. ՄՈՒՀ–ի ՌԾ–ով կրթական ծրագրերի բարեփոխումը սահմանված է որպես ռազմավարական գերակայություն: Այն ենթադրում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագերի աստիճանական բարեփոխում, տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում և ակտիվացում:

ԵԹԱՊՔ–ը ներկայումս իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հետևյալ կրթական ծրագրերը՝ «Հաշվապահական հաշվառում», «Սպասարկման կազմակերպում», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Դիզայն» (ըստ ճյուղերի), «Ապահովագրական գործ», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», «Կարի արտադրության տեխնոլոգիա»: ՄՈՒՀ–ում կա 60 աշխատակից, որից 34–ը դասախոսական կազմն է: Այսօր քոլեջի առաջատար դասախոսները մեծ դերակատարություն ունեն համակարգում մոդուլային ծրագրերի ներդրման գործում:

Հետազոտություն. ՄՈՒՀ–ի խնդիրներն են մանկավարժների և սովորողների հետազոտությունների և ստեղծագործական գործունեության միջոցով գիտության, կրթության և տնտեսության զարգացումը, ստացված արդյունքների օգտագործումը տնտեսության մեջ, հետազոտական և կրթական գործընթացում, ուսանողության շրջանում գիտելիքի տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը: ՄՈՒՀ–ի ռազմավարական խնդիրներից է՝ հետազոտել գործատուների պահանջարկը և արդի պահանջներին համապատասխանող գիտելիքների տիրապետող, պահաջարկ ունեցող մասնագետների պատրաստումը:

Արտաքին կապեր. Արտաքին կապերի ընդլայնման նպատակով ՄՈՒՀ–ը համագործակցում է ՀՀ բուհերի, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և գործատուների հետ: Արտաքին կապերն ընդլայնելու տեսանկյունից ՄՈՒՀ–ը կարևորում է կրթական հաստատությունների հետ տարբեր նախագծերի փոխադարձ քննարկումները և նոր առաջարկների ներդրումը, պրոֆիլային մասնագիտությունների շարժունության ապահովումը, փորձի տարածումը և այլն:

Որակի ապահովում. ԵԹԱՊՔ–ի Ռազմավարական ծրագրով սահմանվում է կրթության որակի ներքին ապահովման համակարգի լիարժեք գործարկումը (մարդկային, ֆինանսական, նյութական և տեղեկատվական ռեուրսային ապահովվածության մեծացմամբ, շահակիցների ներգրավվածության ընդլայնմամբ և գործունեության բոլոր ոլորտներում ՊԻԳԲ շրջափուլի տրամաբանության կիրառմամբ): ԵԹԱՊՔ Որակի ապահովման համակարգը հիմնվել է 2021թ., համակարգի գործարկման համար ՄՈՒՀ–ը ներդրել է փաստաթղթային հենք:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր. `ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն)*:

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր:

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ն իր առաքելությունը ձևակերպել է 2019-2024թթ. Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ): Քոլեջի հիմնական առաքելությունն է՝ գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, նաև բարելավել մասնագիտական կրթության որակը՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական չափանիշներին, նպաստել կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը: Քոլեջի գործունեությունն ուղղված է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, կրթական ծրագրերի համապատասխանեցմանը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովմանը: Ըստ հաստատության առաքելության՝ ՄՈՒՀ-ն իր գործունեությունը ծավալում է Որակավորումների ազգային շրջանակի կրթության 3-րդ, 4-րդ, 5-րդ մակարդակին համապատասխան և տրամադրում է նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն: ՄՈՒՀ-ն իրականացնում է թվով չորս մասնագիտական կրթական ծրագիր, որոնք համահունչ են քոլեջի անվանմանը և վերաբերում են թեթև արդյունաբերության ճյուղին: Դրանք են՝ «Հագուստի նախագծում և մոդելավորում», «Դիզայն (ըստ ճյուղերի)», «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», «Կոշիկի արտադրության տեխնոլոգիա» (վերջին տարիներին դիմորդներ չունեն): Բացի այդ, քոլեջը նաև իրականացնում է թվով հինգ մասնագիտական կրթական ծրագիր, որոնք ըստ էության չեն վերաբերում թեթև արդյունաբերության ճյուղին, բայց կարող են սպասարկել այդ ոլորտը, մասնավորապես՝ «Հաշվապահական հաշվառում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Սպասարկման կազմակերպում», «Ապահովագրական գործ», «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» (վերջին տարիներին դիմորդներ չունեն):

ԵԹԱՊՔ-ն իր նպատակների արդյունավետ իրականացման համար հստակ սահմանել է թվով ութ ռազմավարական հիմնախնդիր և առանձնացրել դրանց լուծման համար անհրաժեշտ գործողությունները: Քոլեջը ձգտում է պահպանել կրթական բարձր չափանիշներ,

խթանել և նպաստել գործընկերների հետ համագործակցությանը և քոլեջի գործատու-գործընկեր արտադրական կազմակերպությունների աջակցությամբ ստեղծել ժամանակակից կարի արհեստանոց-լաբորատորիաներ։ ՌԾ-ում ամրագրված են նաև հիմնարար արժեքներ՝ մատչելիություն, ուսանողի համակողմանի զարգացում, մանկավարժադասախոսական որակյալ կազմ, ուսանողի մասնակցություն, միջանձնային հարաբերություններ։

Քոլեջն ունի նաև 2017-2022թթ. ՌԾ, որի գործողության ժամկետը դեռևս չի ավարտվել, և 2019-2024թթ. ՌԾ-ի մշակումը պայմանավորված է եղել ուսումնական հաստատության տնօրենի փոփոխությամբ։ Այդ երկու ՌԾ-ները նույնական են, ունեն միևնույն ռազմավարական հիմնախնդիրներն ու դրանց լուծման համար անհրաժեշտ գործողությունների նկարագրությունները։ Միակ տարբերակիչ խնդրի ձևակերպումը սպորտդահլիճի վերանորգումն է, որն առաջնահերթության կարգով արդեն իրագործվել է։

Փորձագիտական վերլուծությունները փաստում են, որ քոլեջում իրականացվող նախնական և միջին մասնագիտական կրթական գործընթացներն ընդհանուր առմամբ բխում են ՌԾ-ով սահմանված նպատակներից ու խնդիրներից։ Հարկ է նշել, որ իր որոշ նպատակադրումները ձևակերպելիս քոլեջը բավականին բարձր նշաձող է սահմանել, մասնավորապես՝ կատարելագործել և հզորացնել որակի ներքին ապահովման համակարգը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան, ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր, նախաձեռնել և իրականացնել քոլեջի կրթական գործունեության ինքնագնահատման գործընթաց՝ համապատասխան զեկույցի հրապարակմամբ, գործընկերների օժանդակությամբ ստեղծել ժամանակակից կարի արհեստանոց-լաբորատորիաներ։

ԵԹԱՊՔ-ի ներկայացրած Ինքնավերլուծությունում նշված ներքին և արտաքին շահակիցներն են՝ գործատուները, ծնողները, շրջանավարտները, ուսանողները, դասախոսական և վարչական անձնակազմը, որոնց կրթական կարիքները հիմնականում վեր են հանվում հարցումների, հանդիպումների կազմակերպման, կարծիքների ուսումնասիրման հիման վրա։ Ըստ քոլեջի Ինքնավերլուծության՝ կրթական ծրագրերն արդիականացնելու նպատակով կատարվում են ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության վերաբերյալ ուսումնասիրություններ, մասնավորապես՝ իրականացվում են ստացած կրթության վերաբերյալ շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ հարցումները համակարգված և պարբերական բնույթ չեն կրում և իրենց բովանդակությամբ խնդիրներ վերհանող չեն։ Բացի այդ, արտաքին և ներքին շահակիցները շոշափելի մասնակցություն չեն ունեցել ՌԾ-ի նպատակների սահմանմանը։ Արտաքին շահակիցներից գործատուների հետ փոխհարաբերությունները հիմնականում խորհրդատվական բնույթ են կրում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2019-2024թթ. ՌԾ-ն մշակվել է ուսումնական գծով փոխտնօրենի կողմից, ներքին շահակիցների մասնակցությունը ՌԾ մշակման

աշխատանքներին նվազագույնն է(փորձագիտական խմբի հետ հանդիպած Հաշվողական տեխնիկայի ամբիոնի վարիչի ներգրավվածություն)։ ՌԾ-ի նպատակների և քոլեջից արտաքին շահակիցների ակնկալիքների միջև առկա է տարակարծություն քոլեջի պատրաստած մասնագետների հարցում առ այն, որ շուկային և գործատուներին անհրաժեշտ են ընդամենը կարող-վարպետներ, իսկ քոլեջը թողարկում է հագուստի մոդելավորողներ և տեխնոլոգներ։

ՄՈՒՀ-ն ունի ԵԹԱՊՔ ՌԾ-ի իրականացման գործողությունների 2019-2024թթ. պլան-ժամանակլացույց, ուր ներկայացված են ՌԾ-ով սահմանված հիմնախնդիրների իրականացման գործողությունները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները և կատարման ժամկետները։ Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՌԾ-ի պլան-ժամանակացույցով սահմանված ակնկալվող արդյունքների ձեռքբերման վերաբերյալ հաշվետվություններ առկա չեն, ինչպես նաև հստակեցված չեն պլան-ժամանակացույցով ներկայացված գործողությունների կատարման ժամկետներն՝ ըստ առանձին ուսումնական տարիների, կիսամյակների։ ՄՈՒՀ-ը չի իրականցնում ՌԾ-ով սահմանված ռազմավարական հիմնախնդիրների իրագործման արդյունավետության գնահատում։ Առկա չեն ՌԾ-ի կատարողականի գնահատման ցուցիչներ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատումներն իրականացվում են բանավոր կարգով։ 2017-2022թթ. ՌԾ-ի կատարողականի գնահատումներ ևս առկա չեն։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԵԹԱՊՔ-ն ունի ՄՈՒՀ-ի հիմնական գործունեությունն արտահայտող հստակ և ընկալելի ձևակերպված առաքելություն։ Հաշվի առնելով, որ կրթության ոլորտում քոլեջի ծավալած գործունեությունն ու վարած քաղաքականությունը երբեմն չեն համապատասխանում քոլեջի առաքելությանը, ուստի փորձագիտական խումբը մտահոգված է քոլեջի սահմանած որոշ հիմնախնդիրների լուծման իրագործելիությամբ։ Քանի որ ՄՈՒՀ-ի իրականացրած կրթական ծրագրերն ավելի շատ կարող են դիտարկվել որպես ՀՀ թեթև արդյունաբերության ճյուղին սպասարկող ծրագրեր (Հաշվապահական հաշվառում, Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, Սպասարկման կազմակերպում, Ապահովագրական գործ, Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացության), քան բուն թեթև արդյունաբերությանը վերաբերող ծրագրեր (Հագուստի նախագծում և մոդելավորում, Դիզայն (ըստ ճյուղերի), Հագուստի պատրաստման տեխնոլոգիա, Կոշիկի արտադրության տեխնոլոգիա), ուստի կրթական ծրագրերի նման հարաբերակցությունը կարող է խոչընդոտել քոլեջի առաքելության արդյունավետ իրականացմանը։

Թեև քոլեջի ներքին և արտաքին շահակիցները ներգրավվածություն ունեն ՄՈՒՀ-ի կառավարման մարմիններում, փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ ՌԾ-ի մշակման գործընթացում ներքին և արտաքին շահակիցները վերհանված կարիքների, աշխատաշուկայի ուսումնասիրման հիման վրա կատարած իրենց առաջարկներով չունեն գործուն մասնակցություն ՌԾ-ի մշակման, նպատակների սահմանման ու իրագործման

գործում: Այս համատեքստում փորձագիտական խումբը կարևորում է, որ աշխատաշուկայի և մասնագետների պահանջի վերլուծության շրջանակում քոլեջը գործատուների հետ պարբերական քննարկումներ է կազմակերպում, սակայն դրանք ավելի շատ խորհրդատվական բնույթ են կրում և չեն դրսևորվում ՌԾ-ի նպատակներում ու կատարողականում: Արդյունքում վտանգվում է ՌԾ-ի արդյունավետությունը:

Թեև ՄՈՒՀ-ն ունի ՌԾ-ի իրականացման գործողությունների պլան-ժամանակլացույց, որն ամբողջությամբ համապատասխանում է քոլեջի ՌԾ-ի նպատակադրումներին, սահմանված հիմնախնդիրների իրականացման գործողություններն ունեն պատասխանատուներ, սակայն ակնկալվող արդյունքների ձեռքբերման վերաբերյալ գնահատումների բացակայությունը և գործողությունների կատարման ժամկետների ոչ հստակությունը թույլ չեն տալիս գնահատել ՌԾ-ի ռազմավարական նպատակների իրագործման արդյունավետությունը: Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ի 2017-2022թթ. ՌԾ-ն և 2019-2024թթ. ՌԾ-ն ներառում են հատվող ժամանակահատվածներ (2019-2022թթ), ու որոշ նպատակադրումների մասով նույնականությունն անխուսափելի է: Այդուհանդերձ, 2019-2024թթ ՌԾ-ի հիմքում դրված չեն 2017-2022թթ. ՌԾ-ի արդեն-իսկ ձեռքբերված արդյունքների գնահատումները: Նույն տրամաբանությամբ առկա չեն նաև 2019-2024թթ. ՌԾ-ի կատարման գնահատականները: Վերոնշյալն ուղղակիորեն կարող է խոչընդոտել բարելավման ենթակա արդյունքների դուրսբերմանը և նոր ՌԾ-ի նպատակների, առաջնահերթությունների սահմանմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ ՊՈԱԿ-ի ծավալած գործունեությունը համապատասխանում է ՄՈՒՀ-ի սահմանած առաքելությանը, համահունչ է ՀՀ Որակավորումների ազգային շրջանակին, քոլեջի նպատակներն ու խնդիրներն ընդհանուր առմամբ արտացոլում են շահակիցների կարիքները, ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման համար առկա չեն գործունեության գնահատման մեխանիզմներ, այդքանով հանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԱՊՔ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր:

ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի կառավարումն իրականացվում է համաձայն «Կրթության մասին», «Նախնական կրթության և միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների և ՄՈՒՀ-ի կանոնադրության համաձայն: Քոլեջի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը, ՀՀ կառավարության որոշմամբ լիազորված պետական կառավարման մարմինը, քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը՝ քոլեջի խորհուրդը, քոլեջի գործադիր մարմինը՝ տնօրենը: ՄՈՒՀ-ում կառավարչական գործընթացները կարգավորվում են ՄՈՒՀ-ի կառավարման մարմինների գործառույթների և լիազորությունների շրջանակում հաստատված իրավական ակտերով (կանոնադրություն, կանոնակարգեր, ընթացակարգեր): Փորձագիտական խմբի կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ինչպես ՄՈՒՀ-ում գործող կառավարչական գործընթացների կարգավորման կանոնակարգերը, այնպես էլ այլ գործընթացները կարգավորող գրեթե բոլոր կանոնակարգերն ու ընթացակարգերը հաստատվել են ըստ անհրաժեշտության՝ քոլեջի կառավարման խորհրդի 03.09.2019թ. թիվ 01 արձանագրությունով:

ՄՈՒՀ-ի կառավարման բարձրագույն մարմինը կառավարման խորհուրդն է, ում կողմից հաստատվում են քոլեջի ՌԾ-ն և կառուցվածքը, տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը: Կառավարման խորհուրդը որոշում է ձևավորված շահույթի տնօրինման ուղղությունները, իրականացնում է տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողությունը, քննարկում և հաստատում է վերջինիս հաշվետվությունները: Փորձագիտական խումբն այցի ընթացում պարզեց, որ տնօրենը քոլեջի կառավարման խորհրդին տարեկան հաշվետվությունը ներկայացնում է բանավոր կերպով, և խորհուրդն էլ դա ընդունում է ի գիտություն՝ որպես իր կողմից վերահսկողական գործառույթի կատարում: ՄՈՒՀ-ում գործում է ուսումնամեթոդական խորհուրդ, որը քոլեջի ուսումնական գործընթացի համակարգման մասնակից է և զբաղվում է ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հարցերով: ՄՈՒՀ-ում գործում են մանկավարժական խորհուրդը, տնօրինական խորհուրդը, կազմակերպադաստիարակչական խորհուրդը: Քոլեջում գործում է նաև ուսանողական խորհուրդը, որը, որպես ուսանողական ինքնակառավարման մարմին, ապահովում է ուսանողների շահերի պաշտպանությունը:

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը, և ԵԹԱՊՔ-ի դասախոսներն ու ուսանողները ներառված են քոլեջում գործող խորհուրդների կազմում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների և դասախոսների գործուն մասնակցությունն իրենց առնչվող որոշումների կայացմանը՝ նվազագույնն է: Ընդ որում, այն վերհանված կարիքներն ու առաջարկները, որոնցով նրանք հանդես են եկել, տեսանելի չեն: Բացի դա, որոշումների կայացման հիմքում դրված չեն գործատուների վերհանված կարիքները: Աշխատաշուկայում շրջանավատների զբաղվածության վերաբերյալ առկա են որոշ տվյալներ, դրանք ևս չեն դրվում կառավարչական որոշումների կայացման հիմքում:

ՄՈՒՀ–ի կողմից մշակվել են պաշտոնի նկարագրեր, ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք ամբողջական չեն, օրինակ՝ առանձնացված չեն աշխատակցի իրավունքները և պարտականությունները:

Քոլեջի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականցնում է քոլեջի տնօրենը՝ համապատասխան օրենքների, հիմնադրի որոշումների, լիազորված մարմնի հրամանների և քոլեջի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների հիման վրա: Տնօրենի անմիջական ղեկավարման տակ են քոլեջի կրթական, ֆինանսական, տնտեսական, արտաքին և այլ գործունեությունը:

ԵԹԱՊՔ-ը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից, արտաբյուջեն ձևավորվում է վճարովի հիմունքներով սովորող ուսանողների վարձավճարներից, առկա են կարճաժամկետ ծրագրեր, որոնց գործարկման դեպքում ևս կարող են ձևավորվել ֆինանսական ռեսուրսներ: Ընդ որում, վերջին տարում վճարովի սովորող ուսանողների քանակի ավելացմանը զուգահեռ մեծացել է քոլեջի արտաբյուջեն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի բյուջետային և արտաբյուջետային միջոցների բաշխումն ամբողջությամբ համահունչ չէ ՌԾ-ի ռազմավարական հիմնախնդիրներով սահմանված առաջնահերթություններին, մասնավորապես՝ բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել քոլեջի ուսումնական լաբորատոր բազան, ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը, կաբինետ-լաբորատորիաների բարեկարգում, անհրաժեշտ գույքի ձեռքբերում, աշխատողների աշխատավարձի բարձրացում, սպորտդահլիճի վերանորոգում: Դասախոսական կազմի, վարչատնտեսական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձը բարձրացվել է քոլեջում: 01.10.2021թ. դրությամբ ԵԹԱՊՔ-ի վարչատնտեսական անձնակազմի աշխատավարձի ամսական հավելումները կազմում են նրանց ամբողջ աշխատավարձի ֆոնդի 20,6%-ը, իսկ ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմինը՝ 2,3%: Հարկ է նշել, որ աշխատավարձի հավելումների տարբերակման մեխանիզմները, ինչը նաև ռազմավարական նպատակադրումներից է, հստակ և հիմնավորված չեն: Ավելին, այդ հավելումներն ըստ զբաղեցրած պաշտոնների տարբեր

չափերի են և առկա չեն դրանց հիմնավորումները։ Քոլեջի սպորտդահլիճը տնօրենի գործադրած ջանքերի շնորհիվ ամբողջությամբ վերանորոգվել է։

ԵԹԱՊՔ-ում, որպես երկարաժամկետ պլանավորում, մշակվել և գործում է 2019-2024թթ. ՌԾ-ն, ինչը գրեթե ամբողջությամբ կրկնում է 2017-2022թթ. ՌԾ-ն։ ՌԾ-ի փոփոխությունը պայմանավորված է եղել նոր տնօրենի ընտրությամբ։ Ռազմավարական հիմնախնդիր 8-ով սահմանված է բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը։ Այս առումով, քոլեջում կառավարման արդյունավետության գնահատման մեխանիզմներ առկա չեն։ Քոլեջն ունի 2019-2024թթ. ՌԾ-ի իրականացման գործողությունների պլան-ժամանակացույց, որն ամբողջությամբ արտացոլում է ՌԾ-ով սահմանված հիմնախնդիրները՝ ըստ գործողության, պատասխանատուների, ակնկալվող արդյունքների, կատարման ժամկետների։ Կատարման ժամկետները բոլոր ակնկալվող արդյունքների համար նույնական են (2019-2024թթ)՝ առանց հստակեցնելու դրանց ձեռքբերման կոնկրետ ժամանակացույցը։ Ինչ վերաբերում է ակնկալվող արդյունքների չափելի արձանագրումներին, ապա դրանց վերաբերյալ ևս առկա չեն կատարողականի հաշվետվություններ՝ ըստ պլան-ժամանակացույցով առանձնացրած պատասխանատուների։ Քոլեջում կարճաժամկետ գործառնական պլաններ են տարեկան աշխատանքային պլանները (կառավարման խորհրդի, ուսումնամեթոդական խորհրդի, կազմակերպադաստիարակչական խորհրդի, կարիերայի կենտրոնի, ամբիոնների աշխատանքային պլաններ, ամբիոնների լաբորանտների աշխատանքային պլաններ և այլն), որոնք չեն բխում երկարաժամկետ պլանից։ Ըստ ՌԾ-ով սահմանված գործողություններից ակնկալվող արդյունքների և ժամանակացույցի՝ նախորդ ժամանակահատվածում առաջացած խնդիրների լուծման առումով ևս չկան հստակ կարճաժամկետ պլանավորումներ։ Գործառնական պլանավորմնան մեխանիզմները ևս չեն կիրառվում։

ՄՈՒՀ-ում առկա են հաշվետվություններ (դաստիարակության խորհրդի կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություն, ամբիոնների հաշավետվություններ, մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ախատանքների հաշվետվություն, և այլն)։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդ հաշվետվությունները հիմնականում նկարագրողական են, պարունակում են ընդհանրական տեղեկատվություն, չեն պարունակում քանակական և որակական վերլուծություններ և ներկայացված հարցերն ընդհանուր առմամբ չեն բխում ՌԾ-ից և ՌԾ-ի պլան-ժամանակացույցից։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլում։ Գնահատումներն ու դրանց հիմքով բարելավումներ առկա չեն, ավելին՝ նախորդ և գործող ՌԾ-ները գրեթե ամբողջությամբ կրկնում են միմյանց։

Քոլեջում հարցումների անցկացման գործընթացը կանոնակարգվել է 2019թ.-ից՝ «Հարցումների անցկացման կանոնակարգի» հաստատմամբ, սակայն ՄԿԾ-ների

արդյունավետության վերաբերյալ հարցումների տվյալներ և համապատասխան վերլուծություններ առկա չեն։ Բացի այդ, ՄՈՒՀ-ում այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և կիրառումը գնահատող գործուն մեխանիզմները ևս բացակայում են։ Ընդհանուր առմամբ, ՄՈՒՀ-ում տարբեր գործընթացների արդյունավետության վերաբերյալ առկա են միայն բանավոր քննարկումներ։ Քոլեջում պետական ատեստավորման հանձնաժողովների նախագահների 2021թ. հաշվետվություններում հստակ նշված բացթողումներ կան, որոնք 2021-2022 ուստարում քննարկված և վերլուծված տարբերկով չեն ներդրվել ՄԿԾ-ների լավարկման հիմքում։ Մասնավորապես, հաշվետվություններում նշվում է «Ապահովագրական գործ» մասնագիտության որոշ ուսանողների թույլ գիտելիքների մասին, «Հագուստի մոդելավորման և նախագծման» մասնագիտության ուսանողների որոշ աշխատանքների կատարելագործման մասին, կարծիքների և գրախոսականների որակի մասին։

Քոլեջն իր պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջի, տարբեր ցուցահանդեսների, մրցույթների, օլիմպիադաների միջոցով հրապարակային է դարձնում տեղեկատվությունը կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների, դասավանդման, ուսումնառության և գնահատման համար կիրառվող կանոնակարգերի, ընթացակարգերի մասին։ Շրջանավարտների և նրանց հաջողությունների վերաբերյալ տեղեկատվություն ևս առկա չէ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ում կառավարչական գործընթացների կարգավորման համար մշակվել և գործում են համապատասխան կանոնակարգեր և ընթացակարգեր, սակայն դրանց գերակշիռ մասը հաստատվել է ըստ անհրաժեշտության՝ միևնույն ամսաթվով և արձանագրությունով՝ առաջացնելով անհամապատասխանություն ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացների և այդ կանոնակարգերի ու ընթացակարգերի բովանդակության միջև։ Արդյունքում վտանգվում է կառավարչական գործընթացների արդյունավետությունը։

Ճիշտ է, քոլեջի կառավարման խորհուրդը կայացնում է որոշումներ, տնօրենն աշխատում է իր լիզորությունների շրջանակում, այդուհանդերձ, փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ որոշումների կայացման և հաջորդիվ՝ դրանց իրականացման վերաբերյալ առկա չեն վերհանված ու վերլուծված հիմնավորումներն առ այն, թե դրանք ինչպես են արտահայտում ՌԾ-ի ռազմավարական առաջնահերթությունների իրագործմանը։ Ավելին՝ կայացրած որոշումների հիմքով տնօերենն իր կատարած աշխատանքերի տարեկան հաշվետվությունը կառավարման խորհրդին ներկայացնում է բանավոր կերպով։ Կառավարման խորհուրդն էլ իր հերթին բավարարվում է բանավոր հաշվետվությամբ՝ չպահանջելով գրավոր և փաստարկված հաշվետվություն։ Արդյունքում վտանգվում է որոշումների կայացման և իրականացման արդյունավետությունը։

Թեև դասախոսներն ու ուսանողները ներգրավված են քոլեջի կառավարման գործընթացում, կարող են կառավարման, տնօրինական խորհուրդներում առաջարկություններով հանդես գալ, այնուամենայնիվ, նրանք չունեն գործուն մանակցություն իրենց առնչվող որոշումների

կայացմանը: Նույն համատեքստում՝ գործատուների, շրջանավարտների վերհանված կարիքները ևս չեն դրվում որոշումների կայացման հիմքում: Վերոնշյալը խոչընդոտում է կառավարչական որոշումների կոլեգիալության սկզբունքը:

Դրական դիտելով այն հանգամանքը, որ բացի ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորումից, քոլեջում ձևավորվում են լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ, ինչը վերջին տարում աճի միտում է ցուցաբերել, այնուամենայնիվ, անհանգստացնող է, որ բյուջետային ու արտաբյուջետային միջոցների օգտագործման ուղղություններն ըստ էության չեն արտահայտում քոլեջի ՌԾ առաջնահերթությունները: Քանի որ վարչատնտեսական անձնակազմի աշխատավարձի ամսական հավելումները զգալի ավելացել են՝ կազմելով ամբողջ աշխատավարձի ֆոնդի 20,6%-ը և հստակ հիմնավորված չեն աշխատավարձի ամսական հավելումների տարբերակման մեխանիզմները, վտանգվում է ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետությունը: Փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի տնօրենի գործադրած ջանքերը սպորտդահլիճի վերանորոգման գործում:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ ՄՈՒՀ-ի երկարաժամկետ և կարճաժամկետ պլանները չունեն կատարման արդյունքների վերաբերյալ քանակական և որակական վերլուծություններ, կարճաժամկետ պլաններն ու դրանց հաշվետվությունները համադրելի չեն, ինչն ուղղակիորեն խոչընդոտում է խնդիրներ վերհանելուն և դրանց համարժեք լուծումներ առաջադրելուն և առավել ընդհանուր բնութագրմամբ՝ քոլեջի գործընթացների շարունակական բարելավման մշակույթի ձևավորմանը: Մտահոգիչ է նաև, որ կարճաժամկետ պլանները չեն բխում երկարաժամկետ պլանից՝ բացասաբար անդրադառնալով գործառնական պլանավորման և մշտադիտարկամն մեխանիզմների արդյունավետ իրականացման վրա:

Թեև ՄՈՒՀ-ը մշակել է ՈԱ կենտրոնի քաղաքականություն, այնուամենայնիվ որակի կառավարման սկզբունքը՝ պլանավորում, իրականացում, բարելավում, գնահատում շրջափուլը ամփոփումներ չունի, ընդգծված չեն բարելավման ենթական խնդիրներն ու բարելավման ուղղությունները: Քանի որ նախորդ ՌԾ-ն և գործող ՌԾ-ն ամբողջությամբ կրկնում են միմյանց, այդ իսկ առումով էլ նախորդ ՌԾ-ի հիման վրա հնարավոր չէ դիտարկել բարելավման ենթակա ուղղությունները: Վերոշարադրյալը խոչընդոտում է ՄՈՒՀ-ի կառավարչական գործընթացների շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որն ՄՈՒՀ-ում հարցումները կանոնակարգնել են 2019թ ., սակայն դրանք պարբերական բնույթ չեն կրում և ՄԿԾ-ների արդյունավետությանը վերաբերող հարցումների ամփոփումներ ևս չեն կատարվել, բոլոր քննարկումներն իրականացվում են բանավոր մակարդակում, ուստի քոլեջի գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման, կիրառումը գնահատող հստակ մեխանիզմները ևս բացակայում են: Արդյունքում ամբողջությամբ վտանգված է ուսումնական հաստատության կառավարման համակարգի արդյունավետությունն ու դրա գնահատումը: Քանի որ քոլեջի պետական ատեստավորման

հանձնաժողովների նախագահների 2021թ. հաշվետվություններում հստակ նշված բացթողումները 2021-2022 ուստարում քննարկված և վերլուծված տարբերակով չեն ներդրվել ՄԿԾ-ների բարելավման հիմքում, ուստի այս համատեքստում էլ վտանգվում է ՄԿԾ-ների կառավարման արդյունավետությունը:

Փորձագիտական խմբի կողմից դրական է դիտվում, որ գործող մասնագիտությունների և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը հասանելի է պաշտոնական կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով՝ նպաստելով քոլեջի մասին իրազեկվածության բարձրացմանը, դիմորդների ավելացմանը: Սակայն քոլեջի շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ առցանց հարթակում, ինչի արդյունքում հնարավոր չէ տեղեկանալ շրջանավարտների հաջողությունների մասին՝ հստակ պատկերացում կազմելով քոլեջի տրամադրած կրթության արդյունքների վերաբերյալ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում առկա է կառավարման համակարգի արդյունավետության խնդիր, մասնավորապես՝ ռազմավարական կառավարումն ու պլանավորումը թերի են, երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման մշտադիտարկման մեխանիզմները արդյունավետորեն չեն գործում, որոշումների կայացումը չի հիմնվում հավաստի տվյալների վրա, ընդհանուր առմամբ բացակայում են մասնագիտական կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծումը և հաջորդաբար՝ կիրառումը գնահատող մեխանիզմները, որակի շրջափուլի սկզբունքով գործընթացների իրականացումը գրեթե բացակայում է, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԱՊՔ-ը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

2019-2024թթ ՌԾ-ում որպես նպատակ նշվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումը: Քոլեջում գործող միջին մասնագիտական կրթական ծրագրերն են՝ «Հաշվապահական հաշվառում», «Սպասարկման կազմակերպում» (մենեջերի որակավորում), «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Դիզայն» (ըստ ճյուղերի), «Ապահովագրական գործ», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» (այս մասնագիտությամբ ընդունելություն չունեն), «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա»: Նախնական արհեստագործական կրթության մասնագիտական ծրագրերն են՝ «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Կոշիկի արտադրության տեխնոլոգիա» (կոշկակարի որակավորում): Կոշիկի արտադրության մասնագիտությամբ ընդունելություն չի արձանագրվել: Նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերում ՄՈՒՀ-ն ունի շուրջ 450 ուսանող: ՄՈՒՀ-ում հիմնականում գործում են թեթև արդյունաբերության ճյուղը սպասարկող մասնագիտական կրթական ծրագրեր, քան թեթև արդյունաբերությանը վերաբերող: Ընդ որում, «Ապահովագրական գործ» կրթական ծրագիրը ՀՀ տնտեսության արդի զարգացման փուլում համահունչ չէ քոլեջի առաքելությանն ու անվանմանը:

ՄԿԾ-ները կազմվում են ՊԿՉ-ների հիման վրա և ունեն ձևաչափին համապատասխան իրենց մոդուլները: Մոդուլների բովանդակությունը հիմնականում ամբողջությամբ համապատասխանում է պետական կրթական չափորոշիչներին: ՄՈՒՀ–ն ունի մոդուլային առարկայական ծրագրերի վերանայման և մշակման կանոնակարգ, ինչը ներառում է ուսումնական ծրագրերի կազմման դրույթները, մոդուլային ծրագրերի ընթացիկ վերանայման, մշակման և գնահատման նպատակը, խնդիրները, մոդուլային ծրագրերին առնչվող փաստաթղթերը: Հարկ է նշել, որ քոլեջը դեռևս այդ կանոնակարգին համապատասխան մոդուլային ծրագրեր չի վերանայել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրի պարտադիր մաս կազմող մոդուլային և առարկայական ծրագրերը կազմվում են դասախոսների կողմից և հաստատվում են ամբիոնների նիստերում: Ընդ որում, «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի «Հարկային օրենսդրության կիրառումը հաշվապահական հաշվառման գործում» մոդուլում ներառված են թեմաներ, օրինակ՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, «Ավելացված արժեքի հարկի մասին» «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք և այլն, որոնք ժամանակավրեպ են, ուժը կորցրած են ճանաչվում ՀՀ հարկային օրենսգրքի կիրառության պայմաններում: Փորձագիտական խումբն այս

կապակցությամբ փաստում է, որ տվյալ մասնագիտության գծով դասալսումների ժամանակ օգտագործվել են կիրառելի և առավել արդիական նյութեր:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրերում ներառվել են մոդուլներ, որոնք հիմնականում նպատակ ունեն օժանդակել բուհ ընդունվող ուսանողներին՝ նվազեցնելու հանձնվող տարբերությունների քանակը: Մասնավորապես՝ «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրում ավելացվել են «Ֆինանսներ», «Բարձրագույն մաթեմատիկա» և «Մակրոէկոնոմիկա» մոդուլները, իսկ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրում՝ «Բարձրագույն մաթեմատիկա» մոդուլը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուների և ներքին շահակիցների մոտ կա տարամիտում «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրի շուրջ. գործատուն շրջանավարտներին ընկալում է և ցանկանում է աշխատանքի ընդունել որպես դերձակ-վարպետներ, իսկ ներքին շահակիցները նրանց դիտարկում են որպես հագուստի մոդելավորողների:

Փորձագիտական խումբը նշում է, որ որոշ ՄԿԾ-ներում հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները և ներառվել են ժամանակակից և գործատուի համար պահանջարկված մոդուլներ, օրինակ՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրում վերականայվել և բեռնաթափվել է «Բարձրագույն մաթեմատիկա» մոդուլի բովանդակությունը՝ շեշտադրումը դնելով կիրառական խնդիրների լուծման վրա, արդիականացվել են մի շարք մոդուլների բովանդակություններ. «Web տեխնոլոգիաների կիրառումը» մոդուլը վերանվանվել է «Ստատիկ վեբ կայքերի նախագծում» մոդուլի և արդիականացվել: Նույն մոդուլում ներառված «Javascript լեզվի ուսումնասիրություն» թեման առանձնացվել է և ստեղծվել է նոր «Ջավասկրիպտի կիրառումը» մոդուլը, ավելացվել է «Կիբեռանվտանգություն» մոդուլը: «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության «Նյութագիտություն» մոդուլի ժամաքանակը համալրվել է 36 ժամով՝ դառնալով 72 ժամ: Նույն մոդուլի տեսական և գործնական ժամերի համամասնությունը փոխվել է, ավելացվել են գործնականների ժամերը: Հարկ է նշել, որ արձանագրված դրական փորձերը դեռևս անհատական մակարդակում են, ինստիտուցիոնալ մեխանիզմներն առկա չեն:

ԵԹԱՊՔ-ում իրականացվում են ուսումնական և արտադրական պրակտիկաներ: Ուսումնական պրակտիկանները իրականացվում են ՄՈՒՀ-ում: Արտադրական պրակտիկաները կազմակերպելու համար ունեն համագործակցություններ գործատուների հետ (ավելի մանրամասն չափանիշ 8):

Փորձագիտական այցից, շահակիցների հանդիպումների և դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ ուսումնառության նյութերը հիմնականում ուսանողներին տրամադրվում է նախապես, սակայն երբեմն էլ պահպանված է թելադրությունների ձևաչափը:

Պետք է նաև փաստել, որ երբեմն ուսանողներին առաջարկվում է բուհական գրականություն, օրինակ՝ «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի շրջանակում: «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ի շրջանակում ՄՈՒՀ-ն առաջարկում է նաև ընտրովի առարկաներ՝ հաշվի առնելով ուսանողների նախասիրությունները (Օրինակ «Բատիկ»-ը), սա քոլեջում եզակի դրական փորձ է:

Փորձագիտական այցի վերլուծությունից պարզ դարձավ, որ առկա է որոշ անհամապատասխանություն Ինքնավերլուծության մեջ ներկայացված դասավանդման T-աձև և M-աձև մեթոդների և ուսումնական գործընթացում կիրառվող մեթոդների մեջ: Դասախոսները ևս փաստեցին, որ նշված մեթոդները ոչ բոլոր թեմաների ուսումնառության ժամանակ են նպատակահարմար: Այցից պարզ դարձավ, որ իրականում դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը համապատասխանում է ծրագրերի ակնկալվող արդյունքներին: Քոլեջում առկա է ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության ինքնուրույն մտածողությունը և վերլուծական միտքը զարգացնող ժամանակակից մեթոդների լավ փորձ, որը չի տարածվել մյուս ՄԿԾ-ներում: Օրինակ՝ «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ի դասախոսները կիրառում են «Շրջված դասարան» մեթոդը, որի ժամանակ ուսումնառության նյութերը դասախոսները նախապես տրամադրում են ուսանողներին, իսկ հետո դասի ժամանակ քննարկում և վերլուծում չյուրացված հատվածները, ուսանողների մոտ ձևավորվում են գործնական հմտություններ:

ԵԹԱՊՔ-ում առկա է ուսանողների գիտելիքների գնահատման, հսկման և բողոքարկման ընթացակարգ, որը հրապարակված է քոլեջի կայքէջում և հասանելի է ուսանողներին: Մոդուլներում ներկայացված են գնահատման միջոցներ, որոնք ընդհանուր առմամբ արտացոլում են ուսումնառության արդյունքները: Ուսանողների գիտելիքների ստուգումը իրականացվում է ընթացիկ ստուգումներով՝ կիսամյակի ընթացքում և ավարտին, իսկ վերջնական գնահատումը՝ կիսամյակի վերջում՝ ամփոփիչ ստուգարքների կամ քննությունների հանձնումով: «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագիրն ավարտվում է պետական քննությամբ, ավարտական աշխատանքներ իրականացվում են «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրերում:

2019-2021թթ. համավարակի պատճառով քոլեջն անցել է հեռավար ուսուցման: ՀՀ ԿԳՄՍ նախարարության որոշման համաձայն չեն իրականացվել ընթացիկ և ավարտական քննություններ: Փորձագիտական խումբը պարզեց, որ հեռավար ձևաչափով ուսումնական պրակտիկան անցնելու ժամանակ դասախոսի կողմից գործընթացը նկարահանվել և ուղարկվել է ուսանողներին: Ուսանողներն էլ արդյունքները նկարահանել և ուղարկել են դասախոսներին:

Մասնագիտական կրթական ծրագրերի հանձնարարականների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ի մոդուլներում հանձնարարականները

խնդիրների տեսքով են, որոշ դեպքերում՝ թեստերի։ Թեստերը չեն ներառում ավելի ընդգրկուն հարցեր և ամբողջությամբ չեն ապահովում ակնկալվող արդյունքները։ Առկա են այնպիսի հանձնարարական-խնդիրներ, որոնք ունեն մի քանի պահանջ և կարող են ընդհանուր առմամբ ապահովել վերջնարդյունքը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների համար իրենց ստացած գնահատականները պարզաբանվում են դասախոսների կողմից և լրացվում են չպարզաբանված հարցերը։

«Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ի մոդուլներում առկա են մի շարք անհատական, ինքնուրույն և ստեղծագործական հանձնարարականներ, որոնք ձևավորում են ինքնուրույն և ստեղծագործական մտածողություն՝ ձևել և պատրաստել լեկալներ, լեկալների չափս-հասակային բազմազանեցում, նախագծումների համար տարբեր հաշվարկների կատարում, էսքիզների պատրաստում և այլն։ Որոշ հանրակրթական և ոչ մասնագիտական առարկաների և մոդուլների շրջանակներում ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ, որոնք մեծամասամբ համացանցից և գրքերից վերցված պատճեններ են։ Ռեֆերատների մեծ մասում բացակայում են համապատասխան վերլուծությունները։

Քոլեջում գնահատվում են նաև պրակտիկայի ժամանակ ձեռք բերված գիտելիքները։ Պրակտիկաների հաշվետվություններում հիմնականում արտացոլվում են պրակտիկայի արդյունքները։ Սակայն «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ի որոշ մոդուլների պրակտիկաների օրագրերը հաստատված և ստորագրված չեն, բնութագրերի հատվածները դատարկ են, օրագրերում բացակայում են ղեկավարի կարծիքը, ուսանողի նութագիրը և ստորագրությունը։ Նույնը չի կարելի ասել «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ի պրակտիկաների օրագրերի մասին։ Այստեղ առկա են դասախոսի կողմից ներկայացվող բնութագրերը, եզրակացություններն ու ստորագրությունները։ «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ի պրակտիկայի ժամանակ յուրաքանչյուր ուսանող կատարում է անհատական աշխատանք, իրականացնում հաշվարկներ և ձեռք է բերում գործնական հմտություններ։

ԵԹԱՊՔ–ի բոլոր մասնագիտությունների հիմքում ընկած են ՊԿՉ-ները, ինչպես հայաստանյան պետական մնացյալ քոլեջներում, այս տեսանկյուցից քոլեջի բոլոր ՄԿԾ–ները համադրելի են պետական այլ քոլեջներում իրականացվող նույն մասնագիտական կրթական ծրագրերին։ Փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ Հայաստանի Պետական տնտեսագիտական համալսարանի քոլեջը ԵԹԱՊՔ–ի հետ փորձել է որոշակի համամեմատություններ իրականացնել՝ կապված «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ի տեսական և գործնական դասժամերի բաշխման փորձի հետ։ Գործընթացն ունեցել է խորհրդատվական բնույթ և չունի փաստաթղթային հիմք։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը ցանկանում է շարժունության ծրագիր իրականացնել Ֆրանսիայի Լիոն քաղաքի արդյունաբերական քոլեջների հետ և աշխատանքներ են տարվում հուշագիր կնքելու ուղղությամբ։ Գործընթացը դեռևս բանակցային փուլում է, կոնկրետ արդյունքներ դեռևս առկա չեն։

ՄՈՒՀ-ում մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկումները համակարգված բնույթ չեն կրում: Այցից պարզ էր՝ «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ում կան բարելավված մոդուլներ, վեր են հանվել ուսանողների և արտաքին շահակիցների կարիքները՝ կատարելով համապատասխան փոփոխություններ: Դրանք իրավիճակային են, պարբերական բնույթ չեն կրում և համակարգային ձևով վերլուծված չեն աշխատաշուկայի կարիքները: «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության գծով ամբիոնի նիստերի քննարկումների շրջանակում որոշ մոդուլների բարելավումներ է իրականացվել: Վերոնշյալ լավ փորձը տարածելի չէ այլ ՄԿԾ-ների նկատմամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ն ունի թեթև արդյունաբերությանը վերաբերող մասնագիտական կրթական ծրագրեր, սակայն թեթև արդյունաբերության ճյուղը սպասարկող մասնագիտական կրթական ծրագրերը քանակով ավելի շատ են: Բացի այդ, աշխատաշուկայի համակարգված վերլուծությունների բացակայությունը, գործատուների հետ խորհրդատվական մակարդակով համագործակցությունը հանգեցրել են նրան, որ երկու ՄԿԾ-ներով դիմորդներ չեն կարողացել հավաքագրել: Արդյունքում կարող է վտանգվել ՄԿԾ-ների արդյունավետությունը և համապատասխանությունը ՄՈՒՀ-ի առաքելությանը:

Փորձագիտական խմբի կողմից դրական է դիտվում, որ որոշ ՄԿԾ-ներում հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները և ներառվել են ժամանակակից և գործատուի համար պահանջարկված մոդուլներ: Բացի այդ, «Հագուստի մոդելավորում և նախագծում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ների մոդուլներում առկա են ինքնուրույն ստեղծագործական հանձնարարականներ, որոնք ուսանողի մոտ կարող են ձևավորել ստեղծագործական մտածողություն: Տվյալ մոտեցումը այլ ՄԿԾ-ների նկատմամբ տարածելի դարձնելու պարագայում զգալիորեն կբարելավվի դրանց արդյունավետությունը: Սակայն, դրան զուգահեռ մտահոգիչ է, որ «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ում ռեֆերատները, հանձնարարականները նկարագրողական են, վերլուծություններ չեն պարունակում, առկա են թեմաների կրկնություններ՝ որը կարող է վտանգելել համապատասխանությունը ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչի ամբողջական ձեռքբերմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ որոշ մասնագիտությունների գծով առկա է հանձնարարականների մշակման լավ փորձ, որը նպաստում է ուսանողների մոտ համապատսխան վերջնարդյունքների ձեռքբերմանը, սակայն դա չի տարածվում բոլոր ՄԿԾ-ներում: Դասավանդման արդի մեթոդներ ևս կիրառվում են որոշ մասնագիտություններում, որոնք նպաստում են ուսանողների գործնական հմտությունների ձեռքբերմանը, սակայն այս պարագայում ևս դրանք չեն կիրառվում բոլոր ՄԿԾ-ներում: Արդյունքում, բոլոր ՄԿԾ-ների

նկատմամբ տարածելի դարձնելու դեպքում կարող է բարձրանալ դասավանդման և գնահատման արդյունավետությունը ողջ քոլեջի մակարդակով:

Հատկանշական է, որ քոլեջի «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրի շրջանակում գործատուները ցանկանում են աշխատանքի ընդունել դերձակ-վարպետների, մինչդեռ տվյալ մասնագիտության գծով քոլեջի ուսանողը ստանում է հագուստի մոդելավորողի որակավորում: Առաջացած տարակարծությունը խզում է առաջացնում աշխատաշուկայի պահանջների և ՄՈՒՀ-ի պատրաստած մասնագետների ուղղվածության միջև:

Դրական է գնահատվում, որ քոլեջի բոլոր մասնագիտությունների հիմքում ընկած են ՊԿՉ-ները՝ համադրելի դարձնելով ՀՀ այլ ՄՈՒՀ-երի ՄԿԾ-ների հետ: Բացի այդ, ՀՊՏՀ քոլեջի հետ ունեն ՄԿԾ-ների համեմատության բանավոր համագործակցություն, ինչը կարող է ամրապնդվել, միևնույն ժամանակ ողջունելի է քոլեջի ձեռնարկած քայլերը Ֆրանսիայի Լիոն քաղաքի արդյունաբերական քոլեջների հետ հուշագիր կնքելու ուղղությամբ, ուստի հիմքեր են առաջանում ՄԿԾ-ների բենչմարքինգ իրականացնելու համար:

Թեև ՄԿԾ-ների մշտադիտարկման համակարգված մեխանիզմներ առկա չեն, այնուամենայնիվ փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ որոշ ՄԿԾ-ներում կան բարելավված մոդուլներ, թեև այդ փորձը տարածելի չէ այլ ՄԿԾ-ների նկատմամբ: ՄԿԾ բարելավումները համակարգային դարձնելու պարագայում էապես կլավարկվեն ՄՈՒՀ-ի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերը: Չնայած ինքնավերլուծությունում ներկայացված են ուսումնառության որոշ մեթոդներ, որոնք թեմաների ուսումնառության ժամանակ արդյունավետ չեն, այնուամենայնիվ ողջունելի է, որ քոլեջում առկա է ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների լավ փորձ: Այն տարածելի դարձնելու դեպքում կբարձրանա ուսումնառության արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԱՊՔ-ը որոշակիորեն իրականացնում է թեթև արդյունաբերությանը վերաբերող մասնագիտական կրթական ծրագրեր, ակնկալվող արդյունքները մեծամասամբ համապատասխանում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությանը, առկա են ՄԿԾ-ների բարելավման օրինակներ, փորձագիտական խումբը գտնում է, որ որ ԵԹԱՊՔ-ը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ ԵԹԱՊՔ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ԵԹԱՊՔ-ում՝ 2021 թվականից, ընդունելությունը կազմակերպվում է առցանց՝ dimord.emis.am կայքի միջոցով, առնվազն հիմնական կրթություն ունեցող անձանց դիմումներով: Ընդունելության մասին քոլեջը տեղեկացնում է պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջի և ինստագրամյան էջի միջոցով: Ինչպես պարզ դարձավ ինքնավերլուծությունից, ընդունելությունը կատարվում է առանց քննությունների՝ մրցութային կարգով, բացի «Հագուստի մոդելավորում և նախագծում» և «Դիզայն ըստ ճյուղերի (հագուստի)» մասնագիտությունների, որոնց դիմորդները հանձնում են քննություն «գծանկար» առարկայից:

Դիմորդների հավաքագրման նպատակով ԵԹԱՊՔ-ը համագործակցում է դպրոցների հետ, կազմակերպվում է բաց դռների օր, որի ընթացքում ներկայացվում են քոլեջում գործող մասնագիտությունները: Առկա են թռուցիկներ, որոնցում ներկայացվում է ապագա դիմորդին անհրաժեշտ տեղեկատվություն:

ԵԹԱՊՔ-ի պաշտոնական կայքէջում առկա է «դիմորդին» բաժինը, որտեղ ներկայացվում են մասնագիտությունները, դրանց գծով պահանջվող կրթության հիմքերը և անհրաժեշտ փաստաթղթերը: ԵԹԱՊՔ-ում վերջին տարիներին նկատվում է ուսանողների թվաքանակի աճ «Հագուստի մոդելավորում և նախագծում» /108,125,123/, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» /93,110,119/ կրթական ծրագրերում, ուսանողների թվաքանակը նվազել է «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով, ինչը պայմանավորված է ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից տրամադրված սահմանափակ անվճար տեղերով: ԵԹԱՊՔ-ի 2021թ-ի ընդունելության արդունքում նկատվում է վճարովի համակարգում սովորող ուսանողների թվաքանակի աճ:

Ուսանողներին խորհրդատվություն տրամադրելու և ուղղորդելու նպատակով ՄՈՒՀ-ում 1-ին և 2-րդ կուրսերում գործում է կուրսղեկների (ուսումնական խորհրդատու) ինստիտուտը, ովքեր անհրաժեշտության պարագայում խորհրդատվություն են մատուցում և աջակցում ուսանողներին ընթացիկ կրթական հարցերում: Փորձագիտական ացից պարզ դարձավ, որ ուսանողները իրենց խնդիրների լուծման համար առաջնային կարևոր օղակ համարում են կուրսղեներին: Կուսղեկները հիմնականում ընտրվում են փորձառու դասախոսներից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություններ ուսանողները ստանում են ըստ անհրաժեշտության: Ուսանողները հիմնակնում խորհրդատվությունների անհրաժեշտություն զգում են վերջին կուրսերում

ավարտական աշխատանքներ գրելիս կամ քննաշրջանին պատրաստվելիս: Վերջիններիս պարագայում ՄՈՒՀ-ում գործում է խորհրդատվությունների տրամադրման ժամանակացույց:
ԵԹԱՊՔ-ում գործում է նաև մանկավարժ-հոգեբանի հաստիք, առկա չէ պաշտոնի անձնագիր, ուստի սահմանված չեն մանկավարժ-հոգեբանի գործունեության շրջանակը, և պաշտոնին ներկայացվող կոմպետենցիաները, այցից պարզ դարձավ, որ անհրաժեշտության դեպքում զրույցներ է ունենում կոնֆլիկտային ուսանողների հետ, սակայն կատարված աշխատանքների արդունավետությունը ՄՈՒՀ-ում չի գնահատվում:

ԵԹԱՊՔ-ում առկա չէ վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց առաջարկությունները կամ խնդիրները կարող են ներկայացնել քոլեջի ղեկավար կազմին ցանկացած ժամանակ: Ինչպես փաստեցին ուսանողները, նրանց առաջադրած խնդիրներն իրենց լուծումները հիմնականում գտնում են, օրինակ ուսանողներից մեկն իր ուսման վարձավճարի հետ կապված խնդրով դիմել է տնօրենին և ստացել անհրաժեշտ լուծում:

2018թ.-ից ԵԹԱՊՔ-ում գործում է կարիերայի կենտրոն, որն ունի սահմանված կանոնակարգ և առաջնորդվում է տարեկան աշխատանքային պլանով: Կարիերայի կենտրոնը համագործակցում է մի շարք գործատուների և կազմակերպությունների հետ, շրջանավարտներին ուղղորդում տարածքային զբաղվածության կենտրոններ, սակայն վերջին տարիներին դեպքեր առկա չեն: Ըստ ինքնավերլուծության՝ կարիերայի կենտրոնի պատասխանատուն նախաձեռնում է զրույց-դասընթացներ, որոնց արդյունքում ուսանողները ձեռք են բերում աշխատանքային ինքնակենսագրական (CV) գրելու, աշխատանքի վայրում ճիշտ դրսևորվելու և այլ աշխատանքային հմտություններ:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ կարիերայի կենտրոնի պատախանատուի նախաձեռնությամբ ուսանողները մասնակցել են ՀՀ-ում տեղի ունեցած մի շարք EXPO-ների, աշխատանքի տոնավաճառների, ունեցել են այցեր ՀՀ բուհեր և ծանոթացել նրանց կրթական ծրագրերին, ինչպես նաև այցելել են ոլորտի առաջատար կազմակերպություններ: ԵԹԱՊՔ-ում պարբերաբար կազմակերվում են ցուցահանդեսներ, ցուցադրություններ, որտեղ ուսանողները ցուցադրում են իրենց աշխատանքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտների հետ հետադարձ կապը թույլ է, և կապը հիմնականում պահվում է շրջանավարտների նախաձեռնությամբ:

ԵԹԱՊՔ-ում ուսանողների հետազոտական-վերլուծողական աշխատանքները դրսևորվում են դիպլոմային աշխատանքների, անհատական աշխատանքների, ռեֆերատների, և ընթացիկ հանձնարարությունների տեսքով:

Դիպլոմային աշխատանքներ նախատեսվում են «Հագուստի մոդելավորում և նախագծում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների ավարտական կուրսերում: Դիպլոմային աշխատանքներն ունենում են ղեկավարներ, ովքեր ուսանողներին տրամադրում են

համապատասխան աջակցություն աշխատանքի կատարման ընթացքում: «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ դիպլոմային աշխատանքներ չեն նախատեսվում:

1-ին կուրսում ուսանողները գրում են ռեֆերատներ և անհատական աշխատանքներ, իսկ 2-րդ, 3-րդ կուրսերի ուսանողներին տրվում են հանձնարարականներ, որոնք պարունակում են հետազոտական-վերլուծողական տարրեր, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ անհատական և վերլուծական աշխատանքների պակաս է նկատվում «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունում:

Որպես ուսանողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող առանձին մարմին ԵԹԱՊՔ-ում գործում է «Ուսանողական խորհուրդ», որն ունի սահմանված կանոնադրութուն: «Ուսանողական խորհրդում» ներգրավված են թվով 10 ուսանողներ, որոնցից 6-ը՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության, իսկ 4-ը «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության ուսանողներ են, կազմի գերակշռող մեծամասնությունը 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողներ են:

Կրթադաստիարաչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը աջակցում է «Ուսանողական խորհրդին» և ներկա է գրեթե բոլոր նիստերին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Ուսանողական խորհրդի» գործունեության շրջանակներում չի արտացոլվում ուսանողների իրավունքների պաշտպանությանը միտված որևէ միջոցառում, քանի որ «Ուսանողական խորհուրդը» զբաղվում է մշակութային, սպորտային և ժամանցային միջոցառումների կազմակերպմամբ, իսկ աշխատանքային պլանում ուսանողների իրավունքների պաշտպանության մասով ոչինչ չի նախատեսվում:

Տրամադրվող խորհրդատվությունների, լրացուցիչ պարապմունքների և մատուցվող այլ ծառայությունների արդյունավետությունը գնահատող հստակ մեխանիզմներ առկա չեն, սակայն փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ քոլեջի ղեկավար կազմի և ուսումնաօժանդակ մասի համար արդյունավետության գնահատման չափանիշը ուսանողների կարծիքներն են՝ որոնք դուրս են բերվում բանավոր կերպով: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ԵԹԱՊՔ-ի ուսանողության շրջանում իրականացվել է հարցում, ռեսուրսներից ուսանողների բավարարվածության վերաբերյալ, սակայն հարցումների վերլուծությունները բացակայում են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ԵԹԱՊՔ-ը նոր դիմորդներ հավաքագրելու նպատակով համագործակցում է դպրոցների հետ, կազմակերպվում են բաց դռների օր, առկա են թռուցիկներ, իսկ ընդունելության մասին տեղեկատվության տարածման համար օգտագործվում է պաշտոնական կայքէջը և սոցիալական ցանցերի էջերը, սակայն անհրաժեշտության կա գնահատելու մեխանիզմների արդունավետությունը, որը թույլ կտա ՄՈՒՀ-ին առավել թիրախավորելու կիրառված մեխանիզմների արդյունավետությունը: Դրական է համարվում այն, որ վերջին տարիներին նկատվում է ուսանողների թվաքանակի աճ, որը թույլ է տալիս եզրակացնելու, որ դիմորդների

հավաքագրման մեխանիզմներն արդյունավետ են: Դրական է դիտարկվում նաև այն, որ 2021թ . SS ոլորտի մասնագիտությունների գծով դիմորդների թվաքանակը գերազանցել է ընդունվողների թվաքանակին, ինչը փատում է, որ նշված մասնագիտությունների գծով առկա է մրցակցություն, որը հնարավորություն է տալիս ՄՈՒՀ-ին ընտրելու բարձ առաջադիմություն ունեցող ուսանողներին:

Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում առկա է ուսանողների իրավունքները պաշտպանող մարմին՝ հանձինս Ուսանողական խորհորդի, սակայն ռուսանողների կարիքների վեր հանման մեխանիզմները բավարար արդյունավետ չեն գործում, որը կարող է հանգեցնել նրան, որ ուսանողները ՈԻԽ-ին չընդունեն որպես ուսանողների իրավունքները բարձրաձայող և պաշտպանող կառույց, անհրաժեշտ է ՈԻԽ աշխատանքներում շեշտադրել ոչ միայն ստեղծագործական և ժամանցային միջոցառումները, այլև՝ իրավապաշտպան և տեղեկատվական միջոցառումները:

Ուսանողների կարիքների վեր հանման գործընթացում հատկանշական է կուրսղեկների դերը՝ որպես առաջնային օղակ: Դրական է նաև այն, որ ուսանողների կարիքների բավարավածության վերաբերյալ իրականացվում են հարցումներ ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ, սակայն արդյունքների գնահատման, վերլուծությունների և հետադարձ կապի բացակայությունը կարող է մեխանիզմը դարձնել անարդյունավետ:

Դրական է դիտարկվում մանկավարժ-հոգեբանի գործունեութունը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ են մշակել մեխանիզմներ, որը թույլ կտա գնահատելու տվյալ ծառայության արդյունավետությունը, որը կնպաստի նաև տարվող աշխատանքների շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ սանողները ՄՈԻՀ-ի կողմից ստանում են անհրաժեշտ խորհրդատվություն և ունենում են լրացուցիչ պարապմունքների հնարավորություն: Գնահատելի է, որ ավարտական կուրսերի ուսանողներին տրամադրվում է անհրաժեշտ օժանդակություն քննաշրջանի մեկնարկին: Ուսանողները նաև ստանում են որոշակի խորհրդատվություն Կարիերայի կենտրոնի կողմից՝ ունենալով զրույց-դասընթացներ աշխատաշուկայի, աշխատանքի ընդունվելու հնարավորությունների և այլնի մասին, որը հնարավորություն է տալիս ուսանողներին ուսանողական միջավայրում արդեն իսկ հասկանալ՝ ինչպիսի հմտություններ նրանց անհարժեշտ կլինեն գործատուին ներկայանալիս և աշխատելիս:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ուսանողներն իրենց խնդիրներով և առաջարկություններով ցանկացած պահի կարող են մոտենալ վարչական աշխատակազմին, այնուամենայնիվ փորձագիտական խումը գտնում է, որ սահմանված կանոնակարգը և ժամանակցույցը գործընթացները կդարձնեն ավելի համակարգային:

Դրական է դիտարկվում Կարիերաի կենտրոնի գործունեությունը, համագործակցությունը գործատուների, գործընկերների հետ, այնուամենայնիվ համագործակցությունը սահմանափակվում է միայն եղած գործընկերների առկայությամբ,

անհրաժեշտ է փնտրել նոր գործընկերների, որը կնպաստի ուսանողների աշխատանք գտնելու հնարավորությունների մեծացմանը և գործատուների հետ հաղորդակցման վեկտորի ընդլայմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ամբողջական չեն շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները, որը կարող է խոչընդոտել հասկանալու շրջանավարտի հետագիծը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողներին տրվող հանձնարարականները, դիպլոմային աշխատանքները, ռեֆերատները, անհատական աշխատանքները, որոնք տրվում են «Հագուստի մոդելավորում և նախագծում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտություններով սովորող ուսանողներին, քանի որ դրանք զարգացնում են ուսանողների հետազոտական-վերլուծողական հմտությունները, սակայն անհրաժեշտ է այս մասնագիտությունների դրական փորձը ինստիտուցիոնալացնել:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման հստակ մեխանիզմները գրեթե բացակայում են, որը կարող է խոչընդոտել որակի ապահովման շարունակական բարելավումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԱՊՔ-ում ներդրված են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմներ, վերջին տարիներին ավելացել են դիմորդների և ուսանողների քանակը, ուսանողները ցանկացած ժամանակ կարող են դիմել վարչական անձնակազմին, գործում են ուսանողների կարիերային նպաստող որոշակի ծառայություններ, ուսանողները ստանում են համապատասխան խորհրդատվություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԱՊՔ-ը բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր:

ԵԹԱՊՔ-ի 2019-2024թթ. ՌԾ-ում ռազմավարական հիմնախնդիր 3-ով նախատեսված է որակի հավաստման պահանջվող չափանիշներին համապատասխան՝ համալրել և բարելավել քոլեջի դասախոսական կազմը: Վերոշարադրյալ խնդրի լուծման համար ակնկալվում է ներգրավել բարձրորակ մանկավարժ-դասախոսների, զարգացնել դասախոսների պարբերական վերապատրաստումները, խրախուսել դասախոսների ինքնակրթությունը, ներդնել դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմ: Դասախոսական կազմի գործունեությունն ու ՌԾ-ով սահմանված նպատակադրումն ապահովելու համար ՄՈՒՀ-ում մշակվել և հաստատվել են կանոնակարգեր, ընթացակարգեր: Հատկանշական է, որ այդ կանոնակարգերի հաստատման ամսաթվերը և արձանագրությունների համարները նույնական են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ-ի դասախոսի և արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգին» համապատասխան մրցութային կարգը դեռևս չի կիրառվել, մինչ այժմ դասախոսները աշխատանքի են ընդունվել տնօրենի և փոխտնօրենի կողմից իրականացվող հարցազրույցների հիման վրա: Որոշ դասախոսների էլ աշխատանքի է հրավիրել տնօրենը, այդ թվում՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությունների գծով իրենց լավագույն երկու շրջանավարտների: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում նոր ներգրավված մասնագետները փորձաշրջան են անցնում՝ ունենալով որոշակի դասաժամեր, որից հետո նրանց հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր: ՈՒշագրավ է, որ մինչ նոր մասնագետների ներգրավելը «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրում դասավանդելու նպատակով այլ քոլեջներից հրավիրվել են դասախոսներ, սակայն ամբիոնի կողմից դասալսումների և քննարկումների արդյունքում եզրահանգել են՝ հրավիրյալները չեն համապատասխանում իրենց պահանջներին: Ըստ «ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ-ի դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման կանոնակարգի»՝ ուսանողների շրջանում դեռևս հարցումներ չեն կատարվել և առկա չեն համապատասխան գնահատականներ, չնայած նրան, որ հարցումները հանդիսանում են կարգի բաղադրիչ: Ինչ վերաբերում է դասալսումների անցկացմանը, ապա դրանք իրականցվում են «ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ-ի ամբիոնի դասալսումների և դրանց քննարկումների կանոնակարգով» սահմանված դրույթներին համարժեք՝ հիմնականում փոխադարձ դասալսումների, բաց դասերի անցկացման ձևաչափով, առկա են դրանց

վերաբերյալ 2021թ. վերլուծություններ, արձանագրություններ, ամբիոնների նիստերի քննարկումներ: Դասալսումների արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք հիմնականում ընդգրկում են դասապրոցեսից ստացված դրական դիտարկումները: Մի քանի վերլուծությունում առկա են որոշ դիտողություններ, առաջարկություններ: Դիտողություններից են՝ նյութի (դասի) թելադրում, ուսանողներին քիչ հարցեր ուղղելը, համակարգիչների պակասով պայմանավորված՝ ուսանողների խմբային աշխատանքը, պասիվ ուսանողներին դասին չընդգրկելը, տնային հանձնարարականներն ամբողջությամբ չքննարկելը, նոր թեմային քիչ ժամանակ տրամադրելը: Ընդհանուր առմամբ դասալսումների իրականացման արդյունքում ընդհանրական և ծրագրային խնդիրներ դուրս չեն բերվել, դրանց հիման վրա իրականացված փոփոխությունների օրինակներ ևս չկան: Ավելին՝ դասալսումների արդյունքում դուրսբերված որևէ լավ փորձի տարածման դեպք ևս առկա չէ:

Քոլեջում դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանջները ձևակերպված են տվյալ ՄԿԾ-ներին համարժեք ՊԿՉ-ում, որի համաձայն ՄՈՒՀ-ում դասավանդող դասախոսներն ունեն համապատասխան բազային կրթություն և փորձ: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը ՄԿԾ-ների պահանջից ելնելով՝ դասախոսներին ներկայացվող մասնագիտական հստակ պահանջներ չի ներկայացնում: Դասախոսական կազմի իրավունքներն ու պարտականությունները ներկայացված են դասախոսների աշխատանքային պայմանագրերում:

ԵԹԱՊՔ-ում դասախոսական կազմի մասնագիտական կատարելագործման համար հիմնականում առանձնանում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումները: Քոլեջն առանձին ֆինանսական ռեսուրսներ չի տրամադրում՝ ըստ անհրաժեշտ կարիքի վերհանման մասնագիտական վերապատրաստումներ կազմակերպելու համար: Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման և հագուստի մոդելավորման ամբիոններից կան թվով քիչ դասախոսներ, որոնք իրենց սեփական նախաձեռնությամբ և միջոցներով մասնակցել են մասնագիտական վերապատրաստման դասընթացների: Համավարակի պայմաններում Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովան ամբիոնի դասախոսները առցանց ձևով դասընթացներն արդյունավետ կազմակերպելու նպատակով վերապատրաստել են քոլեջի դասախոսական կազմին: Քոլեջի 2 դասախոս մասնակցել է ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված առցանց վերապատրաստումներին:

ԵԹԱՊՔ-ում 2021-2022 ուստարում աշխատում է 41 դասախոս, որից՝ 34 հիմնական, 6 համատեղությամբ աշխատող (ներկայումս քոլեջն ունի 3 դասախոսի՝ մաթեմատիկայի, հագուստի տեխնոլոգի, հայոց լեզվի մասնագետների թափուր աշխատատեղ): Վերջին տարիներին ՄՈՒՀ-ի դասախոսների տարիքային կազմը երիտասարդացել է, աշխատանքի են ընդունվել շուրջ 13 նոր դասախոս: Փորձագիտական այցից ևս ակնհայտ էր, որ քոլեջը դասախոսների երիտասարդացման ուղղությամբ որդեգրել է հստակ քաղաքականություն: ԵԹԱՊՔ-ի դասախոսական կազմի հետ աշխատանքային

պայմանագրերը կնքվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի դեպքեր առկան են, օրինակ՝ Տնտեսագիտության ամբիոնի վարիչը դարձել է ուսումնական մասի վարիչ, դասախոսը դարձել է ամբիոնի վարիչ:

Քոլեջի 2020-2021 ուստարվա հաստիքացուցակով առկա է 26 վարչատնտեսական հաստիք և 6 ուսումնաօժանդակ և սպասարկող հաստիք: Վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմին աշխատանքի է ընդունում քոլեջի տնօրենը, անձնակազմի ընտրության համար չկա հատուկ ընթացակարգ: ՄՈՒՀ–ի կողմից մշակվել են պաշտոնի նկարագրեր, ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք ամբողջական չեն, օրինակ՝ առանձնացված չեն աշխատակցի իրավունքները և պարտականությունները: Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ն արտաբյուջեից վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի աշխատավարձին ամսական հավելումներ է տրամադրում, և հստակ չէ այդ հավելավճարների դիվերսիֆիկացման տրամաբանությունը: Ըստ քոլեջի «Տնօրենի և մանկավարժների պարգևատրման և խրախուսման կանոնակարգ»-ի՝ դասախոսների պարգևատրման և խրախուասման դեպքեր առկա չեն, սակայն արտաբյուջեի հաշվին 2021թ. հոկտեմբերի 1-ից բարձրացվել են դասախոսների աշխատավարձերը՝ մեկ դասաժամը 1250դ.-ից դարձել է 1360դ.:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է դիտում, որ ԵԹԱՊՔ-ը 2019-2024թթ. ՌԾ-ով նպատակադրել է բարելավել և համալրել քոլեջի դասախոսական կազմը, զարգացնել դասախոսների պարբերական վերապատրաստումները, խրախուսել դասախոսների ինքնակրթությունը, ներդնել դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՌԾ-ով սահմանված նպատակադրումներն ու դասախոսական կազմի գործունեությունն ապահովելու համար ՄՈՒՀ-ում մշակվել և հաստատվել են համապատասխան կանոնակարգեր, սակայն խնդրահարույց է, որ այդ փաստաթղթերը հաստատվել են միևնույն օրով և արձանագրությունով, ինչն ուղղակիորեն վկայում է փաստաթղթերը ոչ թե ըստ էության, այլ՝ ըստ անհրաժեշտության ունենալու վարքագծի մասին: Արդյունքում վտանգվում է ընդունված կանոնակարգերի արդյունավետությունը:

Թեև քոլեջը չունի դասախոսական կազմի ընտրության մշակված քաղաքականություն, այնուամենայնիվ, վերջին երեք տարիների ընթացքում դասախոսական կազմը համալրվել է շուրջ 13 դասախոսներով: ՄՈՒՀ-ը ներգրավում է և առաջիկայում ևս նպատակադրում ունի ներգրավել երիտասարդ դասախոսների, ինչը վկայում է դասախոսական կազմն աստիճանաբար երիտասարդացնելու քոլեջի դիրքորոշման մասին: Թեև դասախոսներն աշխատանքի են ընդունվում տնօրենի որոշմամբ՝ հարցազրույցի միջոցով, այնուամենայնիվ, այս համատեքստում դրական է դիտվում, որ դասախոսներ են ներգրավվելու «ՀՀ ԿԳՄՍՆ ԵԹՔՊՔ-ի դասախոսի և արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար

անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգին» համապատասխան: Արդյունքում կմեծանա հնարավորությունը մրցութային կարգով առավել պատրաստված դասախոսների աշխատանքի հրավիրելը: Չնայած որ քոլեջը դասախոսներին ներկայացվող մասնագիտական հստակ պահանջներ չի ներկայացնում, այդուհանդերձ, փորձագիտական խումբը դրական է գնահատում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Հագուստի մոդելավորում» ամբիոնների կողմից հրավիրված դասախոսներին փորձաշրջան տրամադրելու, դասալսումներ և քննարկումներ կազմակերպելու միջոցով նրանց աշխատանքի ընդունելու որոշում կայացնելու մոտեցումը: Այն քոլեջի բոլոր մասնագիտություններնեի նկատմամբ տարածելի դարձնելու պարագայում կարող է մեծանալ լավ մասնագետներ ներգրավելու հնարավորությունը: Արդյունքում քոլեջը կարող է ունենալ դասախոսներ ներգրավելու հստակ քաղաքականության:

Դրական է նաև դիտվում, որ ՄՈՒՀ-ում կազմակերպվում են բաց դասեր, դասալսումներ, առկա են դասալսումների վերլուծություններ, այնուամենայնիվ, այդ վերլուծություններն իրականացվել են միայն 2021թ.-ին, դրանցով ընդհանրական և ծրագրային խնդիրներ դուրս չեն բերվում, և առկա դրական փորձը ևս չի տարածվում այլ դասընթացների նկատմամբ: Բացի այդ, «ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ-ի դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման կանոնակարգին» համապատասխան ուսանողների շրջանում հարցումներ չեն կատարվել, հետևաբար չկան համապատասխան գնահատականներ՝ խոչընդոտելով կարիքի վերհանմանը և քոլեջի դասախոսների հետագա մասնագիտական կատարելագործմանը:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում, որ դասախոսական կազմը մասնակցում է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, թվով քիչ դասախոսներ կան, որոնք սեփական նախաձեռնությամբ են մասնակցում մասնագիտական վերապատրաստումներին: Գովելի է, որ քոլեջում իրականացվում են փոխադարձ մասնագիտական վերապատրաստումներ: Այդուհանդերձ, մտահոգիչ է, որ քոլեջն առանձին ֆինանսական ռեսուրսներ չի հատկացնում դասախոսների մասնագիտական որակները բարձրացնելու նպատակով վերապատրաստումներին, ինչը կարող է երկարաժամկետում խոչընդոտել դասավանդող դասախոսների մասնագիտական առաջընթացին: Այս համատեքստում հարկ է առանձնացնել, որ քոլեջում առկա են դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի դեպքեր, մասնավորապես՝ Տնտեսագիտության ամբիոնի վարիչը դարձել ուսումնական մասի վարիչ, դասախոսը դարձել է ամբիոնի վարիչ, արդյունքում ՄՈՒՀ-ը հնարավորություն է տալիս ապահովելու մասնագիտական առաջընթաց, այն կարող է դառնալ ՄՈՒՀ-ի համար մշակված լավ քաղաքականություն:

Գովելի է, որ ԵԹԱՊՔ-ն ունենալով կայուն դասախոսական, վարչական ու ուսումնաօժանդակ անձնակազմ՝ ուսման վարձերից ձևավորված արտաբյուջեից վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմին ամսական աշխատավարձին հավելումներ է տրամադրում, որոշակիորեն բարձարցրել է նաև դասախոսների աշխատավարձը: Սակայն այդ

հավելումների բաշխման տրամաբանությունը հստակ չէ, ինչի արդյունքում կարող է վտանգվել ՌԾ-ով սահմանված դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմի արդյունավետությունը: Քանի որ ԵԹԱՊՔ-ի դասախոսական կազմի հետ աշխատանքային պայմանագրերը կնքվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար, ուստի հնարավոր ռիսկեր կարող են առաջանալ դասախոսական կազմի հետագա կայունության ապահովման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ն իր սահմանած նպատակների իրականացման համար ունի կայուն դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ, երիտասարդ կադրեր ներգրավելու և նրանց առաջխաղացմանն ուղղված հստակ գործընթացներ է իրականացնում, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԱՊՔ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

ՄՈՒՀ-ն իր ՌԾ-ում ուղղակիորեն անդրադարձ չի կատարել հետազոտական գործունեության իրականացմանը, սակայն հիմնախնդիրներից բխող խնդիրներում արտահայտված են հետազոտական նպատակադրումները: ՄՈՒՀ-ն ունի ԵԹԱՊՔ-ի դասախոսների և սովորողների հետազոտական աշխատանքների կանոնակարգ, որում հետազոտական աշխատանքները համարել է դասախոսների և ուսանողների աշխատանքների պարտադիր մասը, սահմանել է հետազոտական աշխատանքների նպատակներն ու խնդիրները: Սակայն կանոնակարգում սովորողների հետազոտական աշխատանքների կազմակերպման սահմանված ձևերը միջին մասնագիտական կրթության համար բարձր նշաձող ունեն հատկապես գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, դրանցում սովորողների ներգրավման վերաբերյալ: Օրինակ՝ ուսանողների

մասնակցությունը գիտական միջոցառումներին՝ գիտական սեմինարներին, կոնֆերանսներին, համաժողովներին և այլն: Դասախոսների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման համար ՄՈՒՀ-ը սահմանել է գործունեության տեսակներ՝ ստեղծագործական աշխատանք, հեղինակային և տարբերակային ծրագրերի փորձարկում, դասախոսների աշխատանքների գրախոսություն, մասնակցություն գիտագործնական, տեսական, մանկավարժական կոնֆերանսներին, սեմինարներին, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների, բառարանների, թեմատիկ հավաքածուների մշակում, հոդվածների հրատարակում գիտական ամսագրերում և ժողովածուներում, հեղինակային սեմինարներ, դասեր, տարվա դասախոսի մրցույթի մասնակցություն, աշխատանք որակավորման հանձնաժողովներում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դրանց հիմնական մասը չի իրագործվել, ավելին՝ քոլեջի բյուջեով այդ նպատակների իրականացման համար նախատեսված չեն համապատասխան ծախսեր:

ՄՈՒՀ-ը հետազոտության ոլորտում չունի միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր: ՄՈՒՀ-ի քաղաքականությունը հետազոտության ոլորտում հստակ սահմանված չէ, և ՄԿԾ-ների կառավարման գործընթացում չի իրականացվում միասնական մոտեցումով: Հետազոտական գործունեությունը ՄՈՒՀ-ում որոշակիորեն արտահայտվում է ուսումնական գործընթացում ուսանողներին տրված հանձնարարականների միջոցով (ռեֆերատներ, ուսումնական պրակտիկաներում լաբորատոր աշխատանքներ, նախագծեր, անհատական աշխատանքներ, ցուցահանդեսներ և այլն) և դիպլոմային աշխատանքներում հետազոտական աշխատանքների տարրերի օգտագործմամբ, որոնք ունեն ստեղծագործական բնույթ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այդ փորձը նկատելի է միայն «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության կրթական ծրագրում, 2021-2022 ուստարում դիպլոմային աշխատանքներ նախատեսված են նաև «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացման համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ում, ընդ որում, դիպլոմային աշխատանքները նախատեսվում են բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար: «Հաշավապահական հաշվառում» ՄԿԾ-ում դիպլոմային աշխատանքներ նախատեսված չեն: Այցի ընթացքում փորձագիտական խմբին պարզ դարձավ, որ դասախոսական անձնակազմի կողմից ևս իրականացվում են աշխատաքներ, որոնք պարունակում են որոշակի հետազոտական տարրեր, մասնավորապես՝ SS ոլորտում դասախոսական կազմը մշակել է ձեռնարկ, որը չի հրատարակվել և կիրառվում է որպես ուսումնառության նյութ: Նույն ոլորտի ուսանողների աշխատանքներում ևս նկատելի են հետազոտական տարրեր, մասնավորապես՝ նրանցից մի քանիսը կազմել են մասնագիտական տեխնիկական բառարան, SS ծրագրերի արդյունքների պորտֆոլիոներ: Նշենք, որ առկա է քոլեջի դասախոսի համահեղինակությամբ հրատարակված ձեռնարկ՝ <<Կարի արտադրության տեխնոլոգիա>> (2012թ.) մասնագիտության « Դերձակ» որակավորման համար նախատեսված, սակայն տվյալ որակավորում մասնագիտություն այս պահին քոլեջը չի իրականացնում: Առկա են նաև ««Գծագրություն», գծագրական երկրաչափության հիմունքներով» (2017թ) ուսումնական

ձեռնարկը և «Գծագրերի ընթերցման առաջադրանքներ» ուսուցչի ձեռնարկը[6]: Այսօրինակ աշխատանքները ինստիտուցիոնալ մակարդակով չեն կազմակերվում, այլ կրում են մասնավոր բնույթ: ՄՈՒՀ-ի կողմից հետազոտական բնույթի աշխատանքների խրախուսման մեխանիզմներ առկա չեն: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ընդհանուր առմամբ քոլեջի դասախոսական անձնակազմը այլ ՄՈՒՀ-երի նույն ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի իրականացման վերաբերյալ ուսումնասիրության փորձ չի արել: Հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի քաղաքականությունը արտահայտվում է հիմնականում ԵԹԱՊՔ-ի դասախոսների և սովորողների հետազոտական աշխատանքների կանոնակարգում, որում նշված և փաստացի իրականացված գործունեության մեջ չի երևում քաղաքականության ամբողջականությունը: Միաժամանակ՝ կանոնակարգում սովորողների և դասախոսների հետազոտական գործունեության կազմակերպման որոշ ձևեր (գիտական միջոցառումների մասնակցություն, գիտահետազոտական գործունեության իրականացում) քոլեջի համար անիրատեսական են և դրանք, որպես հմտություններ, չեն ներառված ՈԱՇ-ի 5-րդ մակարդակում: Հետազոտության իրականացման ընթացակարգեր մշակված չեն: Հետազոտական գործունեության դրական փորձի վերհանման և տարածման մեխանիզմները բացակայում են:

«Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության առանձնահատկություններից ելնելով՝ ամբիոնն ուսումնասիրում է նաև տվյալ ոլորտում միջազգային փորձը, սակայն այն համակարգված բնույթ չունի:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի հետ փոխկապակցվածությունը ՄՈՒՀ–ում երբեմն արտահայտվում է դասախոսական անձնակազմի կողմից կազմված ուսումնական ձեռնարկների կիրառմամբ ուսումնառության ընթացքում:

Դատողություններ: Առկա փաստաթղթերում թեև ՄՈՒՀ-ը սահմանել է հետազոտական աշխատանքների կազմաակերպման նպատակը, խնդիրները, գործունեության տեսակները, այնուամենայնիվ դրանց նշաձողը բարձր է և ամբողջությամբ չի արտահայտում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առանձնահատկությունները: Քանի որ սահմանված չեն ՄՈՒՀ-ի հնարավոր հետազոտությունների շրջանակը, ուստի հստակ չեն այն ուղղությունները, որոնք կնպաստեին դասախոսական և ուսանողական համակազմի հետազոտական հմտությունների շարունակական զարգացմանը: ՄՈՒՀ-ը իրեն չի համարում հետազոտական հաստատություն, սակայն իր մշակած քաղաքականությունը որոշ կետերում ունի բարձր սանդղակ, որի արդյունքում խզում է առաջացնում ՄՈՒՀ-ի նպատակադրումների և իրականացվող գործընթացների միջև:

Թեև ՄՈՒՀ-ում իրականացվում են որոշակի հետազոտական տարբեր պարունակող աշխատանքներ, սակայն այն ՄՈՒՀ-ի համար դեռևս հստակ քաղաքականության չի վերածվել,

[6] Նախադասությունն ավելացվել է ՄՈՒՀ-ի դիտարկումների հիման վրա:

այլ դրսևորվում է որոշ աշխատանքների շրջանակներում, որի արդյունքում կարող է վտանգվել ՈԱՇ-ով սահմանված 5-րդ մակարդակի ստեղծագործական, վերլուծական հմտությունների ձևավորումը:

Քանի որ դասախոսական կազմը ևս հիմնականում հետազոտական բնույթի աշխատանքներ չի իրականացնում, այս առումով ևս վտանգվում է ուսանողների համար մասնագիտության արդի պահանջներին համապատասխան հանձնարարականների մշակումն ու տրամադրումը: ՄՈՒՀ-ում հետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ առկա չեն, ուստի շահակիցները (դասախոս, ուսանող) մեծ ջանքեր չեն գործադրում հետազոտական գործունեության զարգացման ուղղությամբ, որն էլ իր հերթին չի նպաստում հետազոտական բաղադրիչի տարածմանը բոլոր ամբիոններում:

Քանի որ բյուջեով սահմանված չեն հետազոտական ոլորտում իրականացվող ծախսերը, նաև չկան դասախոսների՝ հետազոտությամբ զբաղվելու խրախուսման մեխանիզմներ, ապա վտանգվում է ՄԿԾ-ների կայուն և շարունակական զարգացումը և ՄՈՒՀ-ի սահմանած առաքելությունը գիտելիքի ստեղծման և տարածման համատեքստում: Հետազոտական ոլորտում բացակայում են խնդիրների վերհանման, դրանց լուծման, արդյունավետության գնահատման, լավ փորձի տարածման մեխանիզմները, մինչդեռ այդ գործընթացները կարող են լիարժեքորեն նպաստել ՄՈՒՀ-ում հետազոտական նպատակների հստակեցմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ը իր համար սահմանել է իր առանձնահատկություններին ոչ համապատասխան բարձր նշաձող, առկա կանոնակարգում ՄՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարությունը իրատեսական չէ, ռեսուրսները բավարար չեն հետազոտական գործունեություն իրականացնելու համար, առկա չեն հետազոտական աշխատանքները խրախուսող մեխանիզներ, թույլ է հետազոտական գործունեության և ուսումնառության միջև եղած կապը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԵԹԱՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր:

ՀՀ ԿԳՄՍՆ ԵԹԱՊՔ ՊՈԱԿ-ն ունի 4 հարկանի մեկ մասնաշենք՝ 3600 մ² մակերեսով: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ շենքն ունի կապիտալ վերանորոգման կարիք, ՄՈՒՀ-ն ընդգրկվել է ԿԳՄՍ նախարարության վերանորոգումների աշխատանքային պլանում, 2022թ.-ից սկսվելու են հիմնանորոգման աշխատանքները:

ԵԹԱՊՔ-ն ունի 35 լսարան, բավարար հագեցվածությամբ և կահավորված 3 լաբորատորիա, համակարգչային 2 լսարան, ինտերակտիվ լսարան՝ մեկական համակարգչով և ինտերակտիվ գրատախտակով, առարկայական կաբինետներ, կերպարվեստի երկու արվեստանոց, վերանորոգված մարզադահլիճ, մարզադաշտ, գրադարան՝ համալրված 16000 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, դահլիճ, բուժկետ: Քոլեջում առկա է նաև էլեկտրոնային գրադարան, որտեղ տեղադրված են ուսումնառության նյութերը: Համակարգչային երկու կաբինետներում տեղադրված են 17 համակարգիչ, որոնց մի մասը ժամանակակից ծրագրերով հագեցած չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսանողները կարիք ունեն ուսումնասիրելու նաև ՀԾ-ի դիդակտիկ անվճար ծրագիրը, և քոլեջի համակարգիչներում համապատասխան ծրագիրը համակարգիչների հին լինելու պատճառով հնարավոր չէ ներբեռնել: Եղած համակարգիչները բավականացնում են միայն «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսանողներին: Հագուստի մոդելավորում և նախագծում մասնագիտության համար նախատեսված 2 արհեստանոցում առկա են 17 կարի մեքենա և 2 այլ սպասարկող մեքենա: Կերպարվեստի արվեստանոցներում ուսումնառության համար առկա են բավականաչափ մոլբերտներ: Գործատուների հետ համատեղ կիրառման նյութատեխնիկական ռեսուրսներ առկա չեն:

ԵԹԱՊՔ-ը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից, ունի նաև ուսման վարձավճարներից ձևավորված արտաբյուջե, որը հիմնականում ուղղվում է աշխատակիցների աշխատավարձերի հավելումներին: Քոլեջը հնարավորություն ունի իրականացնելու նաև կարճաժամկետ դասընթացներ, որոնցից ևս ակնկալվում է ներգրավել լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ: Պետք է նաև փաստել, որ մինչ փորձագիտական այցը ներառող ժամանակահատվածը իրականացվել է 1 կարճաժամկետ ծրագիր: 2021-2022 ուստարում ՄՈՒՀ-ի արտաբյուջեն ավելացել է՝ ի հաշիվ վճարովի սովորող ուսանողների քանակի աճի: Քոլեջի տարեկան բյուջեն պլանավորվում է նախորդ տարվա կատարողականի հիման վրա և հաստատվում է լիազոր մարմնի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կան դեպքեր, երբ քոլեջի բյուջեից տնօրենը միջոցներ է հատկացրել դասախոսի մասնագիտական

կարիքները հոգալու համար, օրինակ՝ մասնագիտական գրականության, համակարգչի ձեռքբերում:

Փորձագիտական խումբը ԵԹԱՊՔ այցի ժամանակ պարզեց, որ ՄՈՒՀ-ում առկա ֆինանսական ռեսուրսները հիմնականում ուղղվում են աշխատավարձի ֆոնդին և աշխատավարձի ամսական հավելումներին: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում մասնագիտության համար անհարժեշտ են արդի պահանջներին համապատասխանող համակարգիչներ, իսկ Հագուստի մոդելավորում և նախագծում մասնագիտության համար՝ ամապատասխան նյութեր (կտորներ, թելեր և այլն): Ընդ որում, նյութերի կարիքը լրացվում է ուսանողների և դասախոսների միջոցների հաշվին: Պետք է նաև փաստել, որ ներքին շահակիցներն այս հանգամանքը ընդունելի են համարում:

Փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ ԵԹԱՊՔ-ի ռեսուրսային բազան ընդհանուր առմամբ համապատասխանում է ՄԿԾ-ների և ռազմավարական պլանի նպատակների իրականացմանը: ՄՈՒՀ-ն ունի բավարար ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսներ:

ԵԹԱՊՔ-ն ունի ներքին փաստաթղթաշրջանառության լոկալ ցանց: ՄՈՒՀ-ն ունի էլեկտրոնային հասցե և պաշտոնական կայքէջ, որը ստեղծվել է 2018թ-ին «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ամբիոնի դասախոսների կողմից: Կայքում տեղադրված և հասանելի են քոլեջի գործունեությանը վերաբերող փաստաթղթեր: ՄՈՒՀ-ում առկա է նաև «Mulberry» համակարգը, որով ապահովում են արտաքին փաստաթղթաշրջանառությունը:

Քոլեջի մասնաշենքը ցանկապատված է միայն ետնամասով՝ ներառելով մարզադաշտի տարածքը: Մասնաշենքն ունի տեսահսկման համակարգ, մուտքը շուրջօրյա ռեժիմով հսկվում է հերթապահ-պահակների կողմից: ՄՈՒՀ-ի մուտքի մոտ առկա է թեքահարթակ: Մասնաշենքի միջանցքներում տեղադրված են հակահրդեհային սարքեր, առկա չեն տարհանման պլաններ: Գործում է բուժկետ՝ անհրաժեշտ պարագաներով և դեղորայքով: Այն գտնվում է երկրորդ հարկում: Բուժաշխատողն իրականացնում է ամենօրյա ջերմաչափում և համավարակի կանխարգելիչ միջոցառումների վերահսկում:

ՄՈՒՀ-ում առկա են ռեսուրսներից բավարարվածության գնահատման որոշ հարցումներ և դրանց հիմքով դիագրամներ, որոնք ընդհանուր առմամբ հնարավորություն չեն տալիս պատկերացում կազմել իրական պատկերի մասին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ գնահատականները պարբերական բնույթ չունեն: Փորձագիտական խումբը փաստում է, որ ՄՈՒՀ-ի ուսանողների ու դասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ անձնակազմի համար ռեսուրսային բազան հասանելի է: ՄՈՒՀ–ում ռեսուրսների արդյունավետության և հասանելիության վերաբերյալ իրականացվել են հարցումներ ուսանողների շրջանում, սակայն վերլուծություններն առկա չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը կրթական գործունեությունը ծավալում է ընդարձակ մասնաշենքում, որտեղ ընդհանուր առմամբ առկա են համապատասխան լսարաններ, լաբորատորիաներ, համակարգչային լսարաններ, արվեստանոցներ, գրադարան, վերանորոգված մարզադահլիճ: Չնայած, որ այդ լսարաններն ու լաբորատորիաները ունեն անհրաժեշտ և բավարար կահավորում, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը մտահոգված է, որ առկա է ժամանակակից պահանջներին համապատասխան մեքենա-սարքավորումների և նյութերի կարիք: Բացի այդ, գործընկերների հետ համատեղ ռեսուրսներ չեն օգտագործում: Արդյունքում կարող է վտանգվել ՄԿԾ-ների ուսումնառության արդյունավետ իրականացումը:

Ողջունելի է, որ ԵԹԱՊՔ-ում առկա է ֆինանսական ռեսուրսների բաշխման մեխանիզմ, որը հիմնված է քոլեջի տարեկան բյուջեի կազմման և կատարման վերահսկողության վրա: Դրական է դիտվում, որ ՄՈՒՀ-ում 2021-2022 ուստարում ավելացել է արտաբյուջեն, նաև քոլեջը լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ կարող է ձևավորել կարճաժամկետ ծրագրերից: Չնայած, որ արտաբյուջեի միջոցները բաշխվում են ամսական աշխատավարձի հավելումների տեսքով, որոշ դեպքերում էլ՝ դասախոսների մասնագիտական կարիքների հիման վրա, այդուհանդերձ, փորձագիտական խումբը անհանգստացնող է համարում, որ լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների բաշխման հստակ քաղաքականություն առկա չէ: Արդյունքում կարող են վտանգվել ՌԾ-ով սահմանված առաջնահերթությունները:

Դրական է դիտվում, որ քոլեջուրմ առկա է Mulberry համակարգ, ներդրվել է ներքին փաստաթղթաշրջանառության լոկալ ցանց: Փաստաթղթավորման ավտոմատացման արդյունքում կարող է բարելավվել կրթական գործընթացների արդյունավետությունը:

Անվտանգության տեսանկյունից փորձագիտական խումբը դրական է գնահատում առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների առկայությունը՝ նաև հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին: Չնայած, որ յուրաքանչյուր հարկում առկա են հակահրդեհային սարքավորումներ, միևնույն ժամանակ անվտանգության տեսանկյունից դրական չի գնահատվում, որ առկա չեն տարհանման պլաններ: Ներկայիս համավարակի պայմաններում առավելապես ողջունելի է, որ բուժկետը հագեցած է անհրաժեշտ պարագաներով և դեղորայքով՝ նպաստելով համավարակի կանխարգելիչ միջոցառումների վերահսկման իրականացմանը:

Թեև քոլեջում իրականացվել են ռեսուրսների բավարարվածության գնահատման որոշ հարցումներ և կազմվել են դրանց հիմքով դիագրամներ, սակայն մտահոգիչ է, որ այդ հարցումները լիարժեք չեն վերլուծվում և պարբերական բնույթ չեն կրում: Ու քանի որ միևնույն ժամանակ առկա չեն ռեսուրսներից բավարարվածության գնահատման փաստաթղթային հիմքերը, խոչընդոտվում է ներքին և արտաքին շահակիցների իրական կարիքների վերհանումը:

Դրական գնահատելով քոլեջի ռեսուրսային բազայի հասանելիությունը ուսանողների և դասախոսների համար, փորձագիտական խումբը մտահոգված է, որ ռեսուրսային բազայի

հասանելիության և արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների բացակայությունը տեսանելի չի դարձնում բարելավման ենթակա ռեսուրսները։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԱՊՔ-ը՝ ՄԿԾ-ների իրագործման համար ապահովում է անհրաժեշտ և բավարար պայմաններ, ջանքեր է գործադրում ռեսուրսների բարելավման և դրանց նորացման ուղղությամբ, ֆինանսական ռեսուրսները բաշխվում են սահմանված քաղաքականությամբ, ընդհանուր առմամբ ձևավորված է անվտանգ միջավայր ուսումնական գործընթացի կազմակերպման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԱՊՔ-ն ուսումնական միջավայրի ստեղծման, սահմանված առաքելությունների, նպատակների իրագործման համար ունի անհրաժեշտ ռեսուրսներ և բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար։**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

ԵԹԱՊՔ-ի հաշվետվողականութան գործընթացը կանոնակարգվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» «Կրթության մասին» ՀՀ օրենքներով և ԵԹԱՊՔ-ի կանոնադրությամբ։ ԵԹԱՊՔ-ն ունի որոշակիորեն ձևավորված հաշվետվողականության ներքին և արտաքին համակարգ։ Որպես արտաքին հաշվետվողականություն՝ կարիերայի կենտրոնը ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը ներկայացնում է եռամսյակային հաշվետվություն մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման աշխատանքների վերաբերյալ և տվյալներ՝ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, ՄՈՒՀ-ը նաև տվյալներ է տրամադրում նախարարությանը ամենամյա ընդունվող ուսանողների թվաքանակի՝ ըստ կրթական ծրագրերի, դասախոսական կազմի վերաբերյալ, ինչպես նաև ՄՈՒՀ–ի կողմից տրամադրվում է ֆինանսական հաշվետվություն: Ներքին հաշվետվողականությունը սահմանափակվում է ամբիոնների, կուրսղեկների, Կարիերայի կենտրոնի հաշվետվությունների ներկայացմամբ: Հաշվետվություն ներկայացնում է նաև դաստիարակության խորհուրդը, որտեղ ներգրավված են կրթադասիտարակչական

աշխատանքների գծով փոխտնօրենը, կուրսղեկները և ՈւԽ-ն, հաշվետվությունում ներկայացված են համատեղ աշխատանքների մասին տեղեկատվություն: Պետք է նաև փաստել, որ հաշվետվություններում բացակայում է վերլուծական բաղադրիչը և դրանք չեն բխում ՌԾ նպատակներից և խնդիրներից: ԵԹԱՊՔ-ի տնօրենի տարեկան հաշվետվությունները բացակայում են, դրանք բանավոր կերպով ներկայացվում են քննարկման կառավարման խորհրդին, նիստերն արձանագրվում են: Հաշվետվողականության մեխանիզմը բացակայում է նաև ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի համար, իսկ կրթադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի հաշվետվողականությունը որոշակիորեն արտահայտվում է միայն դաստիարակության խորհրդի հաշվետվության մեջ: ՄՈՒՀ-ի հաշվետվողականության մեխանզիզմներից է նաև կազմակերպված ցուցահանդեսները, որոնց միջոցով ԵԹԱՊՔ-ը ներկայացնում է իր և իր ուսանողների ընթացիկ գործունեության արդյունքները:

Արտաքին փաստաթղթաշրջանառության կազմակերպման համար Քոլեջն ունի Mulberry համակարգը, ներքին փաստաթղթաշրջանառության համար գործում է լոկալ ցանց: Գործընթացն իրականացվում է նաև ավանդական թղթային տարբերակով:

ԵԹԱՊՔ-ն ունի պաշտոնական կայքէջ (http://www.etapq.am/), որտեղ պարբերաբար ներկայացվում է քոլեջի գործունեությունը, տեղադրվում են հայտարարություններ, ուսանողներին և դիմորդներին վերաբերող տեղեկատվություն և այլն: Կայքէջում գործում է նաև փաստաթղթեր բաժինը, որտեղ ներկայացված են ՄՈՒՀ-ի վերաբերյալ հիմնական ընթացակարգերը և կանոնակարգերը: Կայքէջում ՄՈՒՀ-ի գործընթացների ներկայացման համար բաժինները ամբողջական չեն, օրինակ՝ Կարիերայի կենտրոնի, Որակի ապահովման կենտրոնի գործընթացները կայքում հասանելի չեն:

ԵԹԱՊՔ-ն ունի նաև ֆեյսբուքյան էջ և ֆեյսբուքյան բաց խումբ, որտեղ ևս պարբերաբար հրապարակվում է տեղեկատվություն քոլեջի գործունեության վերաբերյալ: Կայքէջի մատչելիության մակարդակը պարզելու նպատակով իրականացվել է էլեկտրոնային հարցում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հարցման արդյունքների վերլուծությունները բացակայում են: Քոլեջն ունի Յութուբյան ալիք, որում տեղադրվում են տեսանյութեր ուսանողների՝ միջոցառումներին մասնակցության և գործընկեր կազմակերպություններ այցերի վերաբերյալ, իսկ ինստագրամյան հարթակում գործում են 5-ից ավելի էջեր, որոնցից ակտիվ են 2-ը: Բացակայում են նաև Քոլեջի կայքէջում, սոցիալական ցանցերում առկա էջերում ակտիվության վերաբերյալ ուսումնասիրություններն ու վերլուծությունները**:**

Փորձագիտական այցի ընթացքում արտաքին շահակիցները նշեցին, որ ՄՈՒՀ–ն ունի առավել հանրային լինելու խնդիր՝ հավաքագրելու այնքան դիմորդներ, որի կարիքն ունի գործատուն և աշխատաշուկան: Գործատուների համար PR մասնագետի ներգրավումը ՄՈՒՀ–ի հանրային ճանաչման տեսանկյուից հրատապ է. անհրաժեշտ է մասնագետ, ով թիրախային և պրոֆեսիոնալ կիրականացնի այս գործընթացը:

Համաձայն ինքնավերլուծության՝ որպես հետադարձ կապի ապահովման միջոցներ ԵԹԱՊՔ-ում համարվում են՝ ֆեյսբուքյան էջը, քոլեջի էլեկտրոնային փոստը և ներքին հեռախոսահամարը, իսկ հետադարձ կապերի ձևավորմանը նպաստող մեխանիզմներն են՝ միջոցառումները, հարցումները: Վերջինս պարբերական բնույթ չի կրում: Պետք է նաև փաստել, որ ՄՈՒՀ–ը էլեկտրոնային հասցեին ուղարկված նամակներին արագ չի արձագանքում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ Քոլեջը կազմում և տարածում է ԵԹԱՊՔ-ը ներկայացնող թռուցիկներ: Քոլեջում պարբերաբար իրականացվող միջոցառումներից են՝ «Աշխարհի հմտություններ» միջազգային մրցույթին ուսանողների մասնակցությունը, ամբիոնների կողմից կազմակերպվող ամենամյա ցուցադրությունները, ցուցահանդեսները, տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպված EXPO-ներին և աշխատանքի տոնավաճառներին ուսանողների մասնակցությունը, սպորտային մրցաշարերի անցկացումը հանրակրթական դպրոցների աշակերտների և ԵԹԱՊՔ-ի ուսանողների մասնակցությամբ, զորամասեր այցերը, «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի կազմակերպումը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերջին տարիներին համավարակի պատճառով որոշ միջոցառումների իրականացումը պարբերական բնույթ չի կրում:

Հասարակությայն գիտելիք փոխանցելու մեխանիզմներից է ԵԹԱՊՔ-ի կարճաժամկետ դասընթացների ծրագրերը, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կարճաժամկետ դասընթաց ՄՈՒՀ-ում կազմակերպվել է մեկ անգամ՝ «Սպասարկման կազմակերպում (տուրիզմ)» թեմայով, 2016թ., որին դիմել է 3 անձ: ՄՈՒՀ-ի համար գիտելիքների փոխանցման մեխանիզմներ են նաև ցուցահանդեսները, էքսպոները և տարբեր միջոցառումները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է դիտում այն, որ ԵԹԱՊՔ-ն ունի որոշակիորեն ձևավորված արտաքին հաշվետվողականության համակարգ: Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է այն, որ ներքին հաշվետվողականության գործընթացները ՄՈՒՀ–ում համակարգված և լիարժեք չեն, կառավարման սուբյեկտների՝ տնօրենի, փոխտնօրենի, համակարգային հաշվետվությունների բացակայությունը, կարող են վտանգել ԵԹԱՊՔ–ի ՌԾ նպատակների ամբողջական իրականացումը: Իսկ եղած հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի բացակայությունը կարող է թույլ չտալ ՄՈՒՀ–ին հասկանալու կատարված աշխատանքի բացերը և իրականացնելու ընթացիկ մշտադիտարկումներ:

Փորձագիտական խումբը դրական է դիտարկում կազմակերպված ցուցահանդեսները, ցուցադրությունները, որոնց միջոցով քոլեջը կարողանում է ներկայացնել ուսանողների գործունեության արդյունքները:

Գնահատելի է, որ ԵԹԱՊՔ-ն ունի պաշտոնական կայքէջ, էջեր սոցիալական ցանցերում, որոնց միջոցով կարողանում է ներայացնել քոլեջի գործունեությունը և տարածել

անհրաժեշտ տեղեկատվություն, սակայն որոշ ստորաբաժանումներ գործընթացների լուսաբանման բացակայությունը կայքում լիարժեք չի ապահովում կայքի թափանցիկությունը: Սոցիալական հարթակներում միանման մի քանի էջերի առկայությունը կարող է անդրադառնալ Քոլեջի վերաբերյալ տեղեկատվության արժանահավատ լինելու վրա: Կայքէջում և սոցիալական ցանցերում՝ Քոլեջի էջերում, ակտիվությունների ուսումնասիրությունների և վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում դրանք օգտագործել որպես Քոլեջի գործունեության շարունակական տարածման միջոցներ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ–ում ներդրված են արտաքին և ներքին փաստաթղթաշրջանառության համակարգեր, որը թույլ է տալիս ՄՈՒՀ–ին իրականացնել համակարգային փաստաթղթաշրջանառության գործընթաց:

Փորձագիտական խումբը բավարար է համարում հետադարձ կապի ապահովման համար առկա մեխանիզմները, սակայն դրանց մի մասի ոչ պարբերական բնույթը, իսկ էլեկտրոնային հասցեին ուղարկված նամակների դեպքում՝ արագ արձագանքների բացակայությունը կարող են վտանգել մեխանիզմների կայունությունը: Հանրային տարածման մեխանիզմների առկայությունը ՄՈՒՀ–ի համար այս պահին հրատապ է, քանի որ այն կարող է դառնալ գործատուների հետ համագործակցության և նրանց հետ համատեղ Կրթական ծրագրերի ռազմավարության իրականացման գրավական, հակառակ պարագայում՝ եղած ուսանողների քանակով, գործատուն համագործակցությունն արդյունավետ չի համարում:

Հատկանշական է, որ ԵԹԱՊՔ-ն ունի նաև կարճաժամկետ ծրագրեր, սակայն վերջին 5 տարիներին դրանց իրականացման բացակայությունը անդրադառնում է ծրագրերի արդիականության վրա, որը չի կարող ապահովել շարունակականություն: Մինչդեռ կարճաժամկետ ծրագրերի իրականացումը Քոլեջին հնարավորություն կտա հասարակությանը փոխանցել մասնագիտական գիտելիքներ և արժեքներ: Փորձագիտական խումբը գովելի է համարում նաև ցուցահանդեսների կազմակերպումը, դպրոցների հետ համագործակցությունը մասնագիտական կողմնորոշման նպատակով: Քանի որ դրանց արդյունքները չեն ամփոփվում, ապա Քոլեջը հնարավորություն չի ունենա գնահատել կատարված աշխատանքի արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԱՊՔ–ում որոշակիորեն ձևավորված են արտաքին և ներքին հաշվետվողականության մեխանիզմներ, ներդրված է արտաքին և ներքին փաստաթղթաշրջանառության համակարգ, քոլեջի գործընթացների թափանցիկության և հետադարձ կապի ապահովման համար գործում են տարբեր մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը համապատասխանում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ ԵԹԱՊՔ ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

ՄՈՒՀ-ն իր նպատակներին հասնելու համար ՌԾ-ում կարևորել է արտաքին կապերի շարունակական զարգացումը, գործատուների և հանրային կառույցների ներկայացուցիչների հետ գործընկերային կապերի հզորացումը: ՄՈՒՀ-ը չունի արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն, ընթացակարգեր: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ արտաքին կապերի զարգացման ուղղությամբ հիմնականում գործունեություն է ծավալում ՄՈՒՀ-ի տնօրենը, փոխտնօրենը, մասնագիտական կողմնորոշման և կարիերայի աշխատանքների բաժինը, որակի ապահովման կենտրոնը, պրակտիկաների կազմակերպման ուղղությամբ նաև պրակտիկայի վարիչը, սակայն արտաքին կապերի հետ աշխատանքները դեռևս կանոնակարգված չեն իրականացվում: ՄՈՒՀ-ն ունի մի շարք հուշագրեր, պայմանագրեր տարբեր կազմակերպությունների հետ, որոնց հիմնական գործունեությունը սահմանափակվում է ուսանողների պրակտիկաների անցկացմամբ: Պրակտիկաների կազմակերպման համար ՄՈՒՀ–ը համագործակցում են մի շարք կազմակերպությունների հետ՝ «Ինգո Արմենիա», «Ռոսգոստրախ Արմենիա», «Հայփոստ» ՓԲԸ, «Նաիրի Ինշուրանս», «Արմենիա Ինշուրանս» ՍՊԸ, «ՍԱՍՍՏԵՔՍ» ՍՊԸ, «Ոսկեկար» ՍՊԸ, Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտի ուսումնական կենտրոն, «Խուլերի մշակույթի և սպորտի հանրապետական պալատ» ՓԲԸ, «Վեգա Ուորք» և այլն: Պետք է փաստել, որ ՄՈՒՀ–ի համար ամենախոշոր գործընկերը «Ալեքս տեքստիլ» ձեռնարկությունն է: Փորձագիտական այցի ընթացքում ՄՈՒՀ–ի գործընկերները նշեցին, որ պատրաստ են վերազինելու ՄՈՒՀ–ի ռեսուրսները համապատասխան նյութատեխնիկական բազայով, եթե ՄՈՒՀ–ը կարողանա ապահովել համապատասխան մասնագիտությամբ (կարողներ) և քանակի ուսանողներով: ՄՈՒՀ–ն այս ուղղությամբ դեռ ակտիվ քայլեր չի ձեռնարկում:

ՄՈՒՀ-ը պայմանագրեր է կնքել նաև հայաստանյան բուհերի (ԵՊՏՀ, ԵՊՀ, ՀՊՃՀ, ՀՊՄՀ, ՀՊԱՀ, «Գլաձոր», «Եվրոպական համալսարան», «Եվրասիա միջազգային համալսարան») հետ, համագործակցությունը հիմնականում միտված է ՄՈՒՀ-ի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների՝ բուհի երկրորդ կուրսում ուսումը շարունակելու հնարավորությունների

ստեղծմանը: Բուհերի և գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությունները հիմնականում արտահայտվում են պրակտիկաներում, սակայն դրանց արդյունավետության վերաբերյալ գնահատումներն ու վերլուծությունները բացակայում են:

ՄՈՒՀ-ի համագործակցությունը տեղական քոլեջների հետ ակտիվ չէ, չեն ուսումնասիրվում այլ քոլեջների փորձը համապատասխան մասնագիտությունների շրջանակներում: ՄՈՒՀ–ը համագործակցում է նաև զբաղվածության կենտրոնի, դպրոցների տնօրենների հետ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այդ ուղղությամբ ևս զգալի արդյունքներ չկան: Գործատուները ներգրավված են ավարտական քննությունների հանձնաժողովներում, սակայն առկա չեն հանձնաժողովների կարծիքների վերլուծությունները և դրանց արդյունքների ներդրումները:

ՄՈՒՀ-ն ունի նաև միջազգային մրցույթի մասնակցության դրական փորձ՝ ՌԴ Կազան քաղաքում «Աշխարհի հմտություններ» միջազգային 45-րդ մրցույթին մասնակցել են «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ի ուսանողները, որտեղ 3-րդ կուրսի ուսանողուհին ճանաչվել է հաղթող «Նորաձևության տեխնոլոգիա» անվանակարգում՝ շահելով մրցանակ: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ առաջիկայում իրականացվող այս մրցույթին ՄՈՒՀ-ը կրկին պատրաստվում է մասնակցություն ապահովել: Փորձագիտական այցի ընթացքում, պարզ դարձավ, որ ՄՈՒՀ–ը ցանկանում է համագործակցության շրջանակ փնտրել Ֆրանսիայի Լիոն քաղաքի թեթև արդյունաբերական քոլեջի հետ, գործընթացները բանակցային փուլում են:

Փորձագիտական այցերի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսների մեծ մասը տիրապետում է ռուսերենին, իսկ անգլերենի իմացության մակարդակը դասախոսների մոտ ցածր է: Օտար լեզուների իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովման համար ՄՈՒՀ-ը քայլեր չի ձեռնարկել և հետագայի համար էլ որևէ մեխանիզմ չի մշակել: Ուսանողների օտար լեզուների (ռուսերեն, անգլերեն) իմացության մակարդակը ցածր է: Այս ուղղությամբ ևս հստակ քայլեր չեն ձեռնարկվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը կարևորում է արտաքին կապերի զարգացումը, հզորացումը, սակայն չունի արտաքին կապերի զարգացման տեսլականը արտացոլող քաղաքականություն, ընթացակարգեր և չի իրականացնում կանոնակարգված գործընթաց, որը հնարավորություն կտար ՄՈՒՀ-ին հստակ պլանավորել իր գործողությունները տեսլականի ապահովման ուղղությամբ: Հատկանշական է, որ քոլեջը համագործակցում է մի շարք տեղական կազմակերպությունների հետ, սակայն դեռևս քայլեր չեն ձեռնարկում ընդլայնելու համագործակցության շրջանակը, ինչը կարող է հետագայում դրական անդրադառնալ ՄՈՒՀ-ի պրակտիկաների ծավալային և արդյունավետ իրականացման համար, ինչպես նաև փորձի փոխանակմանը: Այն կընձեռի ուսուցման գործընթացում նաև պրակտիկ դասախոսների ներգրավման, ՄՈՒՀ-ի և աշխատաշուկայի

կապի ուժեղացման հնարավորություններ, որն ավելի շահավետ կլինի ուսանողների պրակտիկ գիտելիքների ձեռքբերման տեսանկյունից:

Չնայած որ ՄՈՒՀ-ում արտաքին կապերի զարգացման ուղղությամբ զբաղվում են մի քանի ստորաբաժանումների ղեկավարներ, սակայն այդ գործընթացը անհրաժեշտություն ունի մեկ անձի կողմից համակարգման, որն արտաքին կապերի զարգացումը կդարձնի ավելի նպատակային և վերահսկելի: ՄՈՒՀ–ի ակտիվությունը արտաքին կապերի զարգացման տեսանկյունից ՄՈՒՀ–ին հնարավորություն կտա հզորացնելու նաև նյութական ռեսուրսները՝ լաբորատորիաների կամ այլ անհրաժեշտ իրերի ձեռքբերման տեսքով, սակայն այս ուղղությամբ ՄՈՒՀ–ի պասիվությունը հանգեցնում է նրան, որ համագործակցության հնարավորությունները մի շարք դեպքերում մնում են միայն պայմանագրերում և կյանքի չեն կոչվում: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ ՄՈՒՀ-ին ոչ միայն անհրաժեշտ է գործընկերային կապերի ընդլայնումը, այլ նաև նմանատիպ ՄԿԾ-ներ իրականացնող տեղական և միջազգային հաստատությունների հետ ակտիվ և արդյունավետ համագործակցություն և փորձի փոխանակում, որն կնպաստի իր դրական փորձի տարածման, շարունակական բարելավման և զարգացման համար: Վերոնշյալը կարող է դրական անդրադառնալ նաև ՄՈՒՀ-ի ճանաչման վրա:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև այն, որ ՄՈՒՀ–ը փորձում է օգտագործել սփյուռքի հնարավորությունները ՄՈՒՀ–ի արտաքին կապերի զարգացման տեսանկյունից, սակայն ՄԿԾ–ների անհամատեղելիության, ինչպես նաև շահակիցների օտար լեզվի իմացության ցածր մակարդակը խոչընդոտում էգործընթացների իրականացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ գործընկերների և գործատուների հետ համագործակցությունը սահմանափակվում է պրակտիկաների կազմամկերպմամբ, չկան արտաքին կապերը խրախուսող համակարգված գործընթացներ, ՄՈՒՀ-ում օտար լեզուների իմացության ցուցանիշը ցածր է և դրա բարձրացմանը նպաստող գործընթացները բացակայում են, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը չի բավարարում չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

ՄՈՒՀ-ն իր 2019-2024թթ. ՌԾ-ում որակի ապահովումը համարել է գերակա ուղղություններից մեկը, որում նպատակադրել է կատարելագործել և հզորացնել որակի ներքին ապահովման համակարգը եվրոպական չափանիշներին համապատասխան: Այդ նպատակից ելնելով՝ 2021թ. ստեղծվել է ԵԹԱՊՔ-ի որակի ապահովման կենտրոնը, որն ունի սահմանված քաղաքականություն, որի համաձայն՝ ՄՈՒՀ-ն իր որակի ապահովման քաղաքականության նպատակը համարում է ՈԱ սկզբունքների, մոտեցումների և ուղղությունների սահմանումը: Քաղաքականության նպատակները հստակ սահմանված չեն, խնդիրների իրականացման համար ընթացակարգերը, մեխանիզմներն ու գործիքակազմը դեռևս հստակ մշակված չեն: Որակի ապահովման կենտրոնն ունի նաև Կանոնակարգ, որում սահմանված են կենտրոնի գործառույթները: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ կենտրոնի ՈԱ քաղաքականության և Կանոնակարգում ՈԱ կենտրոնի սահամանված գործառույթների միջև առկա են անհամապատասխանություններ, օրինակ՝ որակի ապահովման կենտրոնի քաղաքականության փաստաթղթում որպես մշտադիտարկումների իրականացման պատասխանատու նշված է ՈԱ կենտրոնը, իսկ ՈԱ կենտրոնի Կանոնակարգում մշտադիտարկման գործառույթն անգամ ներառված չէ: Այցից պարզ դարձավ, որ ՈԱ գործընթացներն ուղղվել են բացառապես ինքնավերլուծության աշխատանքների իրականացմանը, շատ այլ գործառույթներ դեռևս չեն փորձել իրականացնել: Ավելին, լիարժեք պլանավորված չեն որակի ապահովման շրջանակում ՄՈՒՀ-ի անելիքները, իսկ հետագա գործընթացները նախատեսում են սկսել հավատարմագրման գործընթացի ավարտից հետո:

Կանոնակարգում սահմանված են որակի ապահովման աշխատանքային խմբերի և նրանց գործառույթների մասին, ինչպես նաև ուսանողական խմբի և որակի ապահովման շրջանակում նրանց գործառույթների մասին: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նմանատիպ խմբեր դեռևս ձևավորված չեն, միայն ժամանակավոր ՈԱ աշխատանքային խումբ է ձևավորվել Ինքնավերլուծության իրականացման նպատակով, իսկ ուսանողները, ընդհանուր առմամբ, տեղյակ չեն որակի ապահովման գործընթացներից: ՄՈՒՀ-ը դեռևս չունի հստակ տեսլական որակի ապահովման ուղղությամբ: Որակի ապահովման կենտրոնն ունի մեկ աշխատակից, որը կենտրոնի պատասխանատուն է: Հաստիքը ստեղծվել է 2021թ.: Կենտրոնը դեռևս ապահովված չէ անհրաժեշտ ռեսուրսներով (սենյակ, գրասեղան, համակարգիչ և այլն), սակայն մոտ ապագայում ՄՈՒՀ-ը նախատեսում է ունենալ: Որակի ապահովման կենտրոնը, լինելով նորաստեղծ՝ դեռևս իր աշխատանքները

պլանավորել է ելնելով հավատարմագրման գործընթացից՝ ինքնավերլուծության իրականացում, անհրաժեշտ փաստաթղթերի ապահովում և այլն: Պահանջվող ռեսուրսների կարիքը դեռևս բացահայտված չէ: Քոլեջի բյուջեում ՈԱ գործընթացների համար նպատակային ծախսեր հատկացված չեն: ՄՈՒՀ-ում ՈԱ գործընթացներում ներգրավված աշխատակիցները որակի ներքին ապահովման գործընթացների մասին բավարար չափով տեղեկացված չեն, որակի ապահովման վերաբերյալ վերապատրաստումների կամ դասընթացների չեն մասնակցել:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ը ներքին շահակից է համարում ուսանողներին, դասախոսներին և վարչական կազմին, իսկ արտաքին շահակիցներ՝ ՀՀ պետական կառավարման մարմինների, գործարար հատվածի ներկայացուցիչներին և շրջանավարտներին: Ներքին շահակիցներից վարչական կազմը ներգրավվել է որակի ապահովման, մասնավորապես՝ ինքնավերլուծության իրականացման գործընթացում: Այցից պարզ դարձավ, որ ուսանողները չեն ներգրավվել. թե՛ ՈՒԽ նախագահը, թե՛ ուսանողները անտեղյակ են որակի ապահովման գործընթացներից: Դասախոսական կազմը ևս ակտիվորեն ներգրավված չէ որակի ապահովման, այդ թվում՝ նաև ինքնավերլուծության իրականացման գործընթացում, որն ակնառու դարձավ այցի ընթացքում: Դրա մասին, որպես հաստատության թույլ կողմ, ընդգծել է նաև ՄՈՒՀ-ը:

Արտաքին շահակիցները ներգրավված չեն ՄՈՒՀ-ի որակի ապահովման գործընթացում: Նրանց համագործակցությունը սահմանափակվում է միայն որոշների՝ կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդում ներգրավված լինելով: Գործատուների հետ համագործակցությունը թույլ հիմքերի վրա է: Ինքնավերլուծությունում ՄՈՒՀ-ը նշել է, որ աշխատաշուկայի ներկայացուցիչները ներգրավված են ՄԿԾ-ների վերանայման և վերամշակման գործընթացում, իսկ այցի ընթացքում պարզվեց, որ գործատուները և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչները չեն մասնակցում ՄԿԾ-ների վերանայման աշխատանքներին, միայն մեկն է մասնակցել ՄԿԾ-ների վերանայման, վերամշակման աշխատանքներին, որը ոչ թե ՄՈՒՀ-ի, այլ ՄԿՈՒԶԱԿ-ի թիմի հետ գործատուի համագործակցության շրջանակում է եղել: Շրջանավարտների ներգրավվածությունը արտահայտվել է մեկ անգամ որակի ապահովման կենտրոնի պատասխանատուի կողմից իրականացված հարցման միջոցով, ընտրվել են նորավարտ շրջանավարտները, որոնք դեռևս կարիերայում կայացած չեն եղել:

Որակի ապահովման համակարգը ՄՈՒՀ-ում դեռևս նոր ներդրման և ձևավորմանն փուլում է: Որակի ապահովման կենտրոնն ունի աշխատանքային պլան 2020-2021 ուստարվա համար, որը ներառում է միայն ինքնավերլուծություն իրականացնելու և որակի ներքին մշակույթի ապահովման ընդհանուր գործընթացները, ընդ որում՝ վերջինիս համար սահմանված վերջնարդյունքը չափելի չէ, իսկ 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանը բացակայում է: Բացակայում են նաև հաշվետվությունները: Չեն իրականացվում գործընթացների արդյունավետության գնահատում, բարելավմանը միտված

գործողություններ: Որակի ապահովման կենտրոնն իր գործունեությունն իրականացնելիս դեռևս չի սկսել առաջնորդվել ՊԻԳԲ շրջափուլով:

Որակի ապահովման համակարգը, լինելով ներդրման փուլում, առաջնահերթության է համարել ինքնավերլուծության իրականացումը: Ընդ որում, ինքնավերլուծությունը ՄՈՒՀ-ի առաջին փորձն է, այն ավելի շատ նկարագրական բնույթ ունի, վերլուծական բաղադրիչը բացակայում է: ՄՈՒՀ-ը ինքնավերլուծությունում նշել է, որ ներքին շահակիցների շրջանում կարիքների վերհանման նպատակով պարբերաբար իրականացվում են հարցումներ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առկա է հարցումների կանոնակարգ, որը չի ներառում հարցումների հստակ ընթացակարգը, ավելին՝ դրանում ներառված են նաև քոլեջի մշտադիտարկման առարկաները, որի նպատակը պարզ չէ: Այցի ընթաքցքում պարզ դարձավ, որ դասախոսների շրջանում հարցումներ չեն եղել, ուսանողների շրջանում իրականացվել են որոշ հարցումներ ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ: Հարցումների մեթոդաբանությունը, վերլուծության արդյունքները բացակայում են, դրանք պարբերական բնույթ չեն կրում: Հարցաթերթերը կազմվել են միայն որակի ապահովման կենտրոնի պատասխանատուի կողմից, որտեղ հարցերը հստակ չեն արտահայտում հարցման նպատակը: Տվյալների հավաքագրման գործընթացը ՄՈՒՀ-ում համակարգված չէ և չի կրում ամբողջական բնույթ: Մասնավորապես՝ իրականացված որոշ հարցումների արդյունքները ամփոփված չեն, դրանց հիման վրա բարելավորումներ իրականացված չեն: ՄՈՒՀ–ի կայքը չունի ՈԱ աշխատանքները լուսաբանող համապատասխան բաժին, շահակիցներին գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մեխանիզմները դեռևս մշակված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը փորձում է ներդնել որակի ապահովման համակարգ, սահմանել է քաղաքականություն, ստեղծել կենտրոն, որը կզբաղվի որակի ապահովման գործընթացներով, սակայն դրանցում սահմանված և որակի ապահովմանը միտված փաստացի իրականացվող գործընթացների միջև խզումը, հստակ նպատակադրումների, տեսլականի բացակայությունը կարող են վտանգել որակի ապահովման գործընթացների լիարժեք իրականացմանը: Որակի ապահովման գործընթացների ոչ ամբողջական ընկալումը շահակիցների կողմից կարող է հանգեցնել նրան, որ ՄՈՒՀ-ում որակի ապահովման համակարգի անհրաժեշտությունը ամբողջովին ընդունելի չդառնա թե՛ արտաքին, թե՛ ներքին շահակիցների կողմից: Տվյալ պարագայում կարևոր է ՈԱ պատասխանատուի կողմից գործընթացների վերաբերյալ լիարժեք տեղեկացվածությունը, որի միջոցներից կարող են լինել վերապատրաստումները, փորձի փոխանակումը: ՈԱ պատասխանատուի մասնագիտական աճը ՈԱ գործընթացների վերաբերյալ կբարձրացնի շահակիցների տեղեկացվածությունը և վստահությունը ՄՈՒՀ–ի ՈԱ համակարգի նկատմամբ: Հակառակ պարագայում ներքին շահակիցների պասիվ ներգրավվածությունը հնարավորություն չի ընձեռի նոր գաղափարներ և հիմքեր դնել ՄՈՒՀ-

ի զարգացման գործում, իսկ արտաքին շահակիցների ներգրավածության բացակայությունը ՄՈՒՀ-ի ծրագրերի վերանայման, բարելավման և այլ գործընթացներում կարող է անդրադառնալ ՄՈՒՀ-աշխատաշուկա կապի ոչ ամբողջական զարգացմանը: Մինչդեռ ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը ՄՈՒՀ-ի ՈԱ գործընթացներում կարող է նպաստել ոչ միայն ՄՈՒՀ-ի զարգացմանը, այլև հետադարձ կապի ապահովմանը, որակի մշակույթի ձևավորմանը:

Որակի ապահովման համակարգում կարևոր է տվյալների հավաքագրման, վերլուծությունների և դրանց արդյունքում դրական փորձի տարածման մոտեցումները, ինչը ՄՈՒՀ–ում դեռևս կայուն հիմքերի վրա չէ: Այս համատեքստում կարևոր է նաև տեղեկատվության հավաքագրման համակարգված, ամբողջական բնույթը, շահակիցների կարիքների վերհանումը, նպատակային հարցումների մեթոդաբանության, դրանց արդյունքների համակողմանի վերլուծությունների առկայությունը, արդյունավետության գնահատման մեխանիզմների ու բարելավման գործընթացների առկայությունը, որոնք բացակայում են ՄՈՒՀ-ում: Չնայած ՄՈՒՀ-ն ունի հարցումների կանոնակարգ, մշակված հարցաթերթեր, սակայն դրանք վերանայման կարիք ունեն, քանի որ հարցումների բովանդակությունը չի ապահովում կարիքների ամբողջական վերհանումը, մինչդեռ այն հիմք է ծառայում ՈԱ գործընթացների արդյունավետ պլանավորման համար: ՄՈՒՀ-ը ՈԱ գործընթացներն իրականացնելիս դեռևս չի առաջնորդվում ՊԻԳԲ շրջափուլով, սակայն այն էապես կարող է նպաստել ճիշտ և ժամանակին թերությունները տեսնելուն և դրանք արագ շտկելուն:

Կայքում որակի ապահովման գործընթացների վերաբերյալ բաժնի նյութերի բացակայությունը չի ապահովում գործընթացների թափանցիկությունը:

Եզրահանգում:Հաշվի առնելով, որ որակի ներքին ապահովման համակարգը ՄՈՒ Հ-ում դեռևս ներդրման փուլում է, քաղաքականությունը, կանոնակարգը, գործառույթները հստակ սահմանված չեն, բացակայում է ՄՈՒՀ-ի տեսլականը որակի ապահովման տիրույթում, կենտրոնը դեռևս ազդեցություն չունի ՄՈՒՀ-ի գործընթացների վրա և չի ապահովում քոլեջի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը, ՈԱ աշխատանքները դեռևս պլանավորման փուլում են, ապահովված չեն արդյունավետության գնահատման, տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության մեխանիզմները, հարցումների մեթոդաբանությունը, ներքին և արտաքին շահակիցների շրջանում ՈԱ համակարգի վերաբերյալ տեղեկացվածության ապահովում, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում և վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Արմենուհի Մհերյան
Փորձագիտական խմբի ղեկավար

21 հունվարի 2022թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Միերյան՝ 2000թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) Ֆինանսահաշվային ֆակուլտետի, ֆինանսներ և վարկ մասնագիտությունը, 2004թ. եղել է նույն բուհի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի ասպիրանտ: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ է: 2006–2021թ. աշխատել է ՀՊՏՀ, «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների՝ Տվյալների մշակումը, վիճակագրական վերլուծությունը և ներկայացումը SPSS վիճակագրական փաթեթի միջոցով, Training on capacity building for implementing bologna reforms, «Տեղեկատվական համակարգերի տիրապետում և կատարելագործում», «Ֆինանսական հաշվառում, վերլուծություն և աուդիտ», «Տնտեսամաթեմատիկական մեթոդների և մոդելների յուրացում և կիրառում» և այլ թեմաներով:

Մանուշ Արզումանյան՝ 1991թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի (Վանաձորի մասնաճյուղ) «Էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ» մասնագիտությունը, իսկ 2011թ՝ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի «Ինֆորմատիկա» մասնագիտությունը:1997–2004թթ. աշխատել է Վանաձորի N16 հիմնական դպրոցում որպես ուսուցիչ: 2007–2017թթ. աշխատել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնում (ԿՏԱԿ) որպես Լոռու մարզի մարզային համակարգող: 2017–2020թթ. աշխատել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (Վանաձորի մասնաճյուղ) Ավագ լաբորանտ, ինչպես նաև համալսարանի ավագ դպրոցում՝ ինֆորմատիկայի ուսուցիչ: 2020-2021թթ. աշխատել է Վանաձորի պետականգյուղատնտեսական քոլեջի Մեթոդիստ, կրթության որակի պատասխանատու, ինֆորմատիկայի դասախոս: 2021թ. մինչ օրս աշխատում է «Քարհանյան» առցանց դրոցում որպես մեթոդիստ: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների՝ ՏՀՏ վերապատրաստողների վերապատրաստում «Agence universitaire de la Francophonie (AUF)» կողմից /2020թ./, «Մեդիագրագիտության» դասընթաց «Ինտերնյուս» կազմակերպության կողմից կազմակերպած/2012թ./ և այլն:

Նարինե Միրականյան՝ 2006թ. Ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի « Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» բաժինը (մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչի որակավորում): Մանկավարժական գիտությունների թեկնածու է /2016թ./: 2006-2014 թթ. աշխատել է Վրաստանի Նինոծմինդայի շրջանի Գանձայի թիվ 1 հանրային դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցչուհի: 2014-2016թթ. աշխատել է ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի Մանկավարժության գիտահետազոտական բաժնում՝ որպես մասնագետ, ապա՝ գլխավոր

մասնագետ։ 2019-2020 թթ. Աշխատել է Հյուսիսային համալսարանի Որակի ապահովման վարչության պետ։ 2020թ.–ից մինչ օրս ՀՀ Կրթության տեսչական մարմնի «իԳործ» ծրագրի մասնակից է։ 18 և ավելի գիտամեթոդական հոդվածների հեղինակ է։

Ավետիք Խոստեղյան՝ 2019թ. ավարտել է Գեղարքունիքի մարզի գ. Սարուխանի N2 միջնակարգ դպրոցը գերազանց առաջադիմությամբ։ 2019թ.–ից մինչ օրս սովորում է Գեղարքունիքի մարզի ք. Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի հաշվապահական հաշվառում բաժնում։ 2021թ.–ին մասնակցել է «Միասին» հիմնադրամի կողմից կազմակերպված ամառային դպրոցին։ 2021թ.–ին մասնակցել է ՈԱԱԿ–ի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող–փորձագետների վերապատրաստմանը։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի

22.11.2021թ.-25.11.2021թ.

	22.11.2021թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում քելեջի փոխտնօրենների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած աշխատանքային խմբի հետ (10-12 հոգի)	11:50	12:40	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի Կառավարման խորհրդի անդամների հետ	14:00	14:50	50 րոպե
6.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ (10-12 հոգի)	15:00	16:00	60 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ (10-12 հոգի)	16:10	17:10	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	18:30	70 րոպե

	23.11.2021թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնի վարիչների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները) (10-12 հոգի)	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպում ՈՒսանողական խորհրդի անդամների հետ (10-12 հոգի)	14:10	14:50	40 րոպե
6.	Հանդիպում քոլեջի ստորաբաժանումների ղեկավարների և այլ աշխատակիցների հետ (Կադրերի տեսուչ, Արհկոմ, Պրակտիկայի վարիչ, Լաբորանտներ, Գրադարանավար , Կարիերայի պատասխանատու, Հաշվապահ, մանկավարժ–հոգեբան)	15:00	16:20	80 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե

	24.11.2021թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում «Հագուստի մոդելավորում և նախագծում» և «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրերի պատասխանատու/ների և դասախոսական կազմի հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրի պատասխանատու/ների և դասախոսական կազմի հետ (10-12 հոգի)	09:30	11:00	90 րոպե
2.	Հանդիպում «Հագուստի մոդելավորում և նախագծում» և «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրերի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	11:15	12:30	75 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		12:45	13:45	60 րոպե
4.	Ռեսուրսների դիտարկում, այց ստորաբաժանումներ		13:55	15:30	95 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում		15:40	18:30	170 րոպե

	25.11.2021թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	10:40	11:30	50 րոպե
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:40	12:40	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի Քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպումներ	14:00	17:30	210 րոպե
6.	Հանդիպում քոլեջի ղեկավար կազմի հետ և փորձագիտական այցի ամփոփում	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N.	Փաստաթղթի անվանումը	Չափանիշ
1.	ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույց	1
2.	Ամբիոնների նիստերի արձանագրություններ	2
3.	Ստորաբաժանումների և ամբիոնների աշխատանքային պլաններ և հաշվետվություններ /վերջին 3 տարիների/	2
4.	Դաստիարակության խորհրդի հաշվետվություններ	2
5.	Փոխտնօրենների աշխատանքային պլաններ	2
6.	ՈւԽ աշխատանքային պլաններ, հաշվետվություններ / վերջին 3 տարիների/	2
7.	ՈւԽ նիստերի արձանագրություններ / վերջին 3 տարիների/	2
8.	Կոլեգիալ կառավարմանբ խորհրդի արձանագրություններ	2
9.	Հաստիքացուցակ /վերջին 2 տարիների/	2
10.	Տնօրինական, մանկավարժական խորհրդի արձանագրություններ	2
11.	Աշխատանքային պայմանագրեր	2
12.	Ատեստավորման հանձնաժողովների կարծիքներ	3
13.	Դասացուցակներ	3
14.	Հեռավար ուսուցման անցնելու հրահանգներ, ընթացակարգ	3
15.	«Հաշվապահական հաշվառում», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մոդուլի շրջանակներում տրվող հանձնարարականներ	3
16.	Պրակտիկայի պլաններ և օրագրեր /3 ՄԿԾ-ների /	3
17.	Կուրսայիններ/1 օր SS/, ավարտական աշխատանքներ, ռեֆերատներ, անհատական աշխատանքներ /վերջին 3 տարիների/	3
18.	«Հագուստի մոդելավորում և նախագծում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների դիպլոմայինների գրման կարգ	3
19.	Դիմորդների և ընդունվողների համեմատությունը ներկայացնող ցանկ/վերջին 3 տարիների/	4
20.	Կարիերայի կենտրոնի տվյալներ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ	4
21.	Կոլեգիալ կառավարման խորհրդում ընդգրկված ուսանողների կազմը՝ ըստ մասնագիտության և կուրսերի	4
22.	Ուսանողներին տրվող խորհրդատվությունների գրաֆիկ	4
23.	Կուրսղեկների հաշվետվություններ	4
24.	Դասալսումների արձանագրություններ	5

25.	Դիմում նախարարությանը դասախոսի թափուր տեղի համալրման համար	5
26.	Դասախոսի կողմից մշակված ձեռնարկ, ուսանողի կողմից մշակված մասնագիտական-տեխնիկական բառարան	6
27.	Ուսանողների լաբորատոր աշխատանքներ	6
28.	Վերջին 5 տարիների գույքային ձեռքբերումների ցանկ	7
29.	Վերջին 3 տարիների տարեկան բյուջեի պլան	7
30.	Կայքի մատչելիության և տեղեկատվության որակի մասին հարցման արդյունքների վրա կատարված վերլուծություն/ՏՏ-ի կողմից իրականացվել է հարցում/	8
31.	ՈՒսումնական հաստատությունների ցանկ, որոնք համագործակցում են քոլեջի հետ	9
32.	Քոլեջում իրականացվող հարցումների հարցաթերթիկների օրինակներ, վերլուծություններ /մասամբ/	10
33.	ՈՆԱ պատասխանատուի աշխատանքային պլան	10
34.	Կարիքների գնահատման հարցումների, քննարկումների վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Արվեստանոցներ (կերպարվեստի N1, N2)
2. Կաբինետներ (Հագուստի մոդելավորման և գեղարվեստական ձևավորման ոճի պատմության, հաշվապահության, հագուստի պատրաստման տեխնոլոգիայի)
3. Լսարաններ(մոդելավորման, համակարգչային, ինտերակտիվ)
4. Ամբիոններ (մասնագիտական առարկաների, տնտեսագիտական առարկաների)
5. Գրադարան
6. Արխիվ
7. Դահլիճներ (միջոցառումների, ֆիզկուլտուրայի)
8. բուժկետ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՊՈԱԿ– Պետական ոչ առևտրային կազմակերպություն
2. ՊԻԳԲ– Պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
3. ԵԹԱՊՔ– Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ
4. ՀՀ ԿԳՄՄՆ – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
5. ՄՈՒՀ – Մասնագիտական ուսումնական հաստատություն
6. ՈԱ– Որակի ապահովում
7. ՈԱՇ-Որակավորումների ազգային շրջանակ
8. ՈՆԱ– Որակի ներքին ապահովում
9. ՈԱԱԿ– Որակի ապահովման ազգային կենտրոն
10. ՄԿՈՒԶԱԿ– Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման կենտրոն
11. ՄԿԾ– Մասնագիտական կրթական ծրագիր
12. ՊԿՉ– Պետական կրթական չափորոշիչ
13. ՈՒԽ-ՈՒսանողական խորհուրդ
14. ՓԲԸ– Փակ բաժնետիրական ընկերություն
15. ՍՊԸ– Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն